

Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2012 թվականի _____ «____»
N_____ որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 - 2017 ԹԹ.
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Ստեփանակերտ
2012 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	3
1. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	4
2. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.....	7
3. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	7
3.1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՉԱՐԳԱՅՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	7
3.1.1. Գործարար և ներդրումային միջավայրը.....	8
3.1.2. ՓՄՁ պետական աջակցությունը.....	9
3.1.3. Ֆինանսական միջնորդությունը.....	9
3.1.4. Տնտեսության հիմնական ճյուղերը.....	10
3.1.4.1. Արդյունաբերությունը.....	10
3.1.4.2. Գյուղատնտեսությունը և գյուղը.....	11
3.1.4.3. Քաղաքաշինությունը.....	14
3.1.4.4. Զբոսաշրջությունը.....	15
3.1.5. Ենթակառուցվածքները.....	15
3.1.5.1. Էներգետիկան.....	15
3.1.5.2. Զրամատակարարումը և ջրահեռացումը.....	16
3.1.5.3. Տրանսպորտային ենթակառուցվածքները.....	17
3.1.5.4. Հեռահաղորդակցությունը.....	18
3.1.6. Բնապահպանությունը և բնօգտագործումը.....	18
3.2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	20
3.2.1. Մոցիալական ապահովությունը և ժողովրդագրությունը.....	20
3.2.2. Առողջապահությունը.....	22
3.2.3. Կրթությունը և գիտությունը.....	23
3.2.4. Մշակույթը և երիտասարդությունը.....	24
3.2.5. Սպորտը.....	27
3.3. ՊԵՏԱԿԱՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	28
3.3.1. Արտաքին քաղաքականությունը.....	28
3.3.2. Դատախիրավական համակարգ.....	30
3.3.3. Պաշտպանունակությունը և բանակաշինությունը.....	30
3.3.4. Պետական կառավարումը և տեղական ինքնակառավարումը.....	31
3.3.4.1 Կառավարման համակարգի բարեփոխումները.....	31
3.3.4.2 Տարածքային կառավարումը և տեղական ինքնակառավարումը.....	34
3.3.5. Բյուջետային համակարգը.....	34
3.3.6. Հարկային համակարգը.....	35
3.3.7. Մրցակցության պաշտպանության համակարգը.....	36
3.3.8. Անվտանգությունը, հասարակական կարգը և արտակարգ իրավիճակների կանխարգելումը.....	37

ՆԱԽԱԲԱՆ

Կառավարության 2012 - 2017 թթ. գործունեության ծրագիրը մշակվել է՝ հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի նախընտրական ծրագրի դրույթները, ինչպես նաև խորհրդարանական կուսակցությունների ծրագրային դրույթների ընդհանրությունները:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության գործունեությունը նպատակաուղղված է լինելու երկրի ներքին և արտաքին անվտանգության ապահովմանը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության 60-րդ հոդվածով ամրագրված տնտեսական, սոցիալական, մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրների իրագործմանը:

Կառավարության ծրագիրը ապահովելու է նախորդ տարիների ձեռքբերումների շարունակական զարգացումը և քաղաքական, տնտեսական, սոցիալական ու կառավարման համակարգերի համարձակ և իրատեսական բարեփոխումների իրականացումը՝ որպես հետևանք երաշխավորելով մեր քաղաքացիների կյանքի որակի էական բարելավումը:

Իր գործունեությամբ կառավարությունը ապահովելու է Արցախի Հանրապետության բարգավաճումը, որտեղ մարդը, նրա կյանքն ու անվտանգությունը, իրավունքներն ու ազատությունները հանդիսանում են բարձրագույն արժեքներ՝ ամրագրված երկրի հիմնական օրենքով:

Երկրի քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացումն ապահովվելու է ազատության, մարդկանց հավասարության և արժանապատվության, օրենքի գերակայության և ժողովրդավարական սկզբունքների երաշխավորության հիման վրա. յուրաքանչյուր ոք պետք է ունենա ինքնադրսևորման և ինքնաիրացման բոլոր հնարավորությունները:

Արցախի կայուն զարգացման ապահովումը հնարավոր չէ առանց արդյունավետ արտաքին քաղաքականության իրականացման, գործունակ իրավապահ համակարգի, մարտունակ պաշտպանության բանակի,

կայուն և թափանցիկ ժողովրդավարական ինստիտուտների, լրատվամիջոցների ազատության, քաղաքացիական հասարակության հետ ակտիվ երկխոսության և անկախ ու անաչառ դատարանի:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ստանձնած պարտավորությունների կատարման համար ստեղծել և շարունակաբար ամրապնդում է պետականության անհրաժեշտ հիմքերը. առկա են բոլոր պետական ինստիտուտները, որոնց գործունեությունն իրականացվում է ժողովրդավարական աշխարհում ընդունված սկզբունքներին համապատասխան: Կառավարության խնդիրն է, պետական ինստիտուտների հնարավորություններն ուղղելով մարդուն, ապահովել կայուն զարգացում՝ հաշվի առնելով նաև մեր գալիք սերունդների կյանքի որակի վրա ազդեցությունները:

Այդ նպատակով կառավարության ջանքերը ուղղված կլինեն մի կողմից կայուն տնտեսական աճի ապահովմանը, մյուս կողմից՝ սոցիալական արդարության հաստատմանն նպատակաուղղված լայնածավալ ծրագրերի իրականացմանը: Կառավարության ուշադրության կիզակետում կլինեն պարենային և էներգետիկ անկախության ապահովմանն ուղղված ծրագրերը:

Կառավարությունը նպատակ է դնում բարեփոխումների հետևողական իրագործումը ամրապնդել այնպիսի ձեռքբերումներով, որոնցում երկարաժամկետ կայուն զարգացման հիմքերն ու համակարգային լուծումները գերակշռում են կարճաժամկետ արդյունքներին:

Իրավունքների և ազատությունների հարգման, իշխանության թևերի լիարժեք փոխըմբռնման, համերաշխության և սերտ համագործակցության, քաղաքացիական հասարակության հետ ակտիվ երկխոսության սկզբունքներով արդյունավետ գործող և քաղաքացիների վստահությունը վայելող իշխանությունը հանդիսանալու է կառավարության ծրագրի իրագործման գրավականը, յուրաքանչյուր ոք պետք է տեսնի և զգա կառավարության կողմից իրականացվող փոփոխությունների արդյունքները:

1. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության գործունեությունը հիմնված է լինելու հետևյալ 4 գերակայությունների վրա՝

ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 1. Տնտեսական զարգացում և աճի կայուն տեմպերի ապահովում:

ԼՂՀ տնտեսական զարգացման և աճի կայուն տեմպերի ապահովման նպատակով միջոցներ են ձեռնարկվելու հետևյալ հիմնական ուղղություններով՝

- բարենպաստ գործարար միջավայրի ապահովում, ներդրումային գրավչության բարձրացում և մասնավոր ներդրումների ներգրավման խթանում,
- տարածքային համաչափ զարգացում, քաղաքի և գյուղի միջև գոյություն ունեցող տնտեսական ակտիվության անհավասարության կրճատում,
- նոր աշխատատեղերի ստեղծման, տեղական արտադրողի գործունեության խթանման քաղաքականության իրականացում,
- տնտեսության դիվերսիֆիկացում՝ տնտեսության կառուցվածքում արտահանելի հատվածների տեսակարար կշռի ավելացման միջոցով,
- ՓՄՁ պետական աջակցության նոր գործիքների կիրառում,
- նորարարական տեխնոլոգիաների ներգրավվածության ընդլայնում,
- տնտեսական աճին միտված կայուն և հուսալի արտադրական ենթակառուցվածքների զարգացում,
- հանքարդյունաբերության զարգացման ծրագրերի իրականացում՝ ելնելով ընդերքի ռացիոնալ օգտագործման և էկոլոգիական պահանջների պահպանման սկզբունքներից,
- գյուղատնտեսության արդիականացում և ագրոբիզնեսի զարգացմանն օժանդակում,
- ձեռնարկատերերի համար հավասար մրցակցային պայմանների ապահովում,
- Արցախի և Հայաստանի տնտեսությունների ինտեգրման շարունակում և խորացում,
- երկրի տնտեսական անվտանգության ապահովմանն ուղղված ծրագրերի իրականացում,
- հնարավոր արտաքին ցնցումների նկատմամբ տնտեսության դիմադրողականության բարձրացում:

ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 2. Առողջ, կիրթ, զարգացած և հայրենասեր հասարակության կայացում, նրա բոլոր անդամների համար կյանքի բարեկեցիկ և արժանապատիվ պայմանների ապահովում:

- Այս առումով գործողություններ են իրականացվելու հետևյալ ուղղություններով՝
- բնակչության սոցիալական պաշտպանվածության մակարդակի հետևողական բարձրացում, սոցիալական քաղաքականության հասցեականության ապահովում,
 - հասարակության յուրաքանչյուր անդամի համար արժանապատիվ ծերության ապահովմանն ուղղված կենսաթոշակային համակարգի բարեփոխումների իրականացում,
 - զոհված ազատամարտիկների ընտանիքների, Մեծ Հայրենականի և Արցախյան պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծում, հասարակության սոցիալապես խոցելի խմբերին թիրախային ծառայությունների մատուցում,
 - առաջին անհրաժեշտության ապրանքների և ծառայությունների գների (սակագների) կարգավորման, արտաքին գնաձային ճնշումների ու ներքին շուկայում գնային տատանումների զսպման քաղաքականության շարունակում, որի նպատակը գների (սակագների) բարձրացման արդյունքում առաջացած լրացուցիչ ֆինանսական բեռը բնակչության փոխարեն պետության կողմից ստանձնելն է՝ տարբեր լծակների ու մեխանիզմների կիրառմամբ,
 - ժողովրդագրական իրավիճակի բարելավում,
 - բնակչության զբաղվածության աճի ապահովում,
 - որակյալ կրթական, առողջապահական և մշակութային ծառայությունների մատչելիության ապահովում,
 - նպաստավոր պայմանների ստեղծում՝ հայ հոգևոր ու մշակութային ժառանգության պահպանման, ազգային արժեքների և ավանդույթների վերարտադրության ու զարգացման համար,
 - հասարակության միջին խավի ընդլայնում՝ որպես բարեկեցիկ հասարակության հուսալի հենք:

ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 3. Արցախի պետականաշինությունը և պաշտպանունակու-թյունն ապահովող ինստիտուտների զարգացում:

- Նշված գերակայությունը ենթադրում է՝
- օրենքի գերակայության ապահովում, օրենսդրական բազայի հետագա զարգացում ժողովրդավարական սկզբունքների հիման վրա,
 - ԼՂՀ զինված ուժերի բարձր մարտունակության պահպանում, բանակի՝ ինչպես շարքային, այնպես էլ սպայական անձնակազմի արհեստավարժության մակարդակի բարձրացման, զորահավաքային պատրաստականության կատարելագործման, զորավարությունների պարբերաբար անցկացման ու սպառազինության ժամանակակից միջոցներով համալրման ապահովում,
 - դատաիրավական համակարգի կատարելագործում,
 - փաստաբանության, քաղաքական կացության ակտերի գրանցման, նոտարիատի, դատական ակտերի հարկադիր կատարման, իրավաբանական անձանց պետական գրանցման ոլորտներում վարչարարության արդյունավետությունը և մատուցվող

ծառայությունների որակը բարձրացնելու ուղղությամբ իրականացվող օրենսդրական բարեփոխումների շարունակում,

- պետական կառավարման համակարգում հաշվետվողականության, թափանցիկության և պատասխանատվության սկզբունքների գերակայության ապահովում, կառավարության ռազմավարական ծրագրերի քննարկմանը հասարակության ակտիվ ներգրավում, հանրությանը որակյալ ծառայությունների մատուցում, ինչպես նաև իրազեկ ու արհեստավարժ մասնագետների ներգրավման նպատակով պետական ծառայության գրավչության բարձրացում,

- կոռուպցիոն ռիսկեր պարունակող օրենսդրական բացերի, կոռուպցիա ծնող պատճառների վերացում, այդ գործընթացում թափանցիկության բարձրացում՝ շեշտադրելով կոռուպցիայի դեմ պայքարի «կանխարգելիչ» մոտեցման գերակայությունը,

- տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխումների իրականացում, աջակցություն միջհամայնքային միավորումների ստեղծմանն ու միջհամայնքային համագործակցության ինստիտուտի ներդրմանը,

- հարկային և մրցակցության պաշտպանության համակարգերի բարելավում, օրենսդրության հավասարաչափ և անվերապահորեն կիրառում բոլոր տնտեսավարողների նկատմամբ,

- իրավապահ մարմինների աշխատանքի կատարելագործում՝ հիմնական շեշտադրումն անելով իրավախախտումների նախականիման վրա, նրանց գործունեության նկատմամբ պետական և հասարակական արդյունավետ վերահսկողության ապահովում:

ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 4. ԼՂՀ միջազգային ճանաչում և դարաբաղա-ադրբեջանական հակամարտության խաղաղ կարգավորում:

Այս գերակայությունը ենթադրում է հետևյալ գործողությունների իրականացում՝

- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքական ղեկավարության և համապատասխան կառույցների ջանքերի հետագա ակտիվացում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային ճանաչման գործընթացում,

- Ղարաբաղա-ադրբեջանական հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի բոլոր փուլերին՝ կարգավորման փիլիսոփայության շուրջ կարծիքների փոխանակումից մինչև կոնկրետ քայլերի և պայմանավորվածությունների մշակումն ու իրագործումը, ԼՂՀ լիարժեք մասնակցության ապահովում,

- Տարբեր երկրների և միջազգային կառույցների հետ փոխհարաբերությունների զարգացում՝ ինչպես քաղաքական երկխոսության հաստատման ու խորացման, այնպես էլ հումանիտար, գիտակրթական, մշակութային կապերի զարգացման ու ընդլայնման ճանապարհով,

- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առօրյայի, առկա մարտահրավերների և նվաճումների վերաբերյալ տեղեկատվությունը միջազգային հանրությանը հասցնելու ուղղությամբ աշխատանքների ակտիվացում,

- Որպես Արցախի զարգացման և բարգավաճման հիմնական պայմաններից մեկը՝ Արցախի, Հայաստանի ու Սփյուռքի միջև կապերի հետագա ընդլայնում և խորացում:

2. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Կառավարությունը սույն ծրագրի իրականացմամբ 2012-2017 թվականների ընթացքում նպատակադրում է ապահովել՝

- համախառն ներքին արդյունքի տարեկան 9-11 տոկոս իրական աճ,
- ներդրումների ծավալի 10-15 տոկոս միջին տարեկան աճ,
- ներմուծման նկատմամբ արտահանման աճի առաջանցիկ տեմպեր,
- հինգ հազարից ավելի նոր աշխատատեղերի ստեղծում,
- նվազագույն աշխատավարձի մակարդակի առնվազն կրկնապատկում,
- գյուղատնտեսության համախառն արտադրանքի 12 - 15 տոկոս միջին տարեկան աճ,
- էլեկտրաէներգիայի արտադրության տարեկան ծավալի ավելի քան երեք անգամ աճ՝ այն հասցնելով 380 - 400 մլն կՎտ/ժամի,
- երկրի էներգետիկ անվտանգության աստիճանի բարձրացում՝ վերականգնվող էներգառեսուրսների օգտագործման ընդլայնման և էներգիայի նոր պոտենցիալ սեփական աղբյուրի՝ քարածխի օգտագործման հիման վրա,
 - ԼՂՀ այցելող զբոսաշրջիկների թվաքանակի ավելացում մինչև 3 անգամ,
 - սոցիալական երաշխիքների տրամադրման գործող ծրագրերի պահպանում և նոր մեխանիզմների ապահովում, հատկացվող գումարների ավելացում,
 - միջին կենսաթոշակի չափի կրկնապատկում,
 - ժողովրդագրական իրավիճակի բարելավում, ծնելիության ցուցանիշի աճ,
 - պետական եկամուտների հավաքագրման մակարդակի աճ,
 - պետական կառավարման համակարգի կողմից հանրությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացում և վարչարարության բարելավում:

3. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նախորդ տարիներին արձանագրված տնտեսական աճի տեմպերը կայուն հիմքեր են ստեղծել տնտեսության հեռանկարային զարգացման, բնակչության կենսապայմանների բարելավման և հաստատուն առաջընթացի համար:

Տնտեսական աճի բարձր տեմպերի հետագա ապահովումը շարունակում է մնալ տնտեսական քաղաքականության հիմնական գերակայությունը՝ որպես երկրի կայուն զարգացման կարևորագույն գրավական, որի պարագայում առավել կերաշխավորվի ոչ միայն մեր սերնդի, այլ նաև ապագա սերունդների բարեկեցությունը: Այս առումով տնտեսական քաղաքականությունը, քանակական աճին զուգընթաց, ուղղվում է որակական տնտեսական զարգացման ապահովմանը: Այսինքն՝ շարունակելով իրականացնել ներքին առկա ռեսուրսների արդյունավետ և համակարգված օգտագործման վրա հիմնված տնտեսական քաղաքականություն, կառավարությունը միաժամանակ հիմքեր է ստեղծելու մարդկային ռեսուրսների, այն է՝ մտավոր և ստեղծագործ ունակությունների, առավել ինտենսիվ օգտագործման հիման վրա տնտեսական զարգացում ապահովելու համար:

Առաջնորդվելով ազատ տնտեսական մրցակցության և տարածքային զարգացման համաչափության ապահովման, տնտեսության դիվերսիֆիկացման և արդիականացման հիմնական սկզբունքներով՝ կառավարությունը ծրագրում է առաջիկա 5 տարիների ընթացքում ապահովել 9-11% միջին տարեկան տնտեսական աճ՝ տարեցտարի ավելացնելով բնակչության եկամուտների մակարդակը: Այդ նպատակով կառավարությունը

- իրականացնելու է տնտեսական աճի բաղադրիչների որակական փոխակերպմանը միտված քաղաքականություն՝ աջակցելով արտահանող, նոր տեխնոլոգիաներ կիրառող, ռեսուրսախնայող և բարձր արժեք ստեղծող, ինչպես նաև զբաղվածության աճ ապահովող ոլորտներին ու ընկերություններին,

- ներդրումային գրավչության բարձրացման և մասնավոր ներդրումների խթանման նպատակով շարունակելու է իրականացնել գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ,

- ակտիվացնելու է ենթակառուցվածքների զարգացման գործընթացը՝ նաև պետություն-մասնավոր հատված համագործակցության սկզբունքի ներքո,

- շարունակելու է խորացնել Արցախի և Հայաստանի տնտեսությունների ինտեգրման գործընթացը,

- շարունակելու է փոքր և միջին ձեռնարկատիրությանն աջակցությունը՝ կիրառելով աջակցության նոր գործիքներ:

Առավելագույն արդյունք ստանալու համար կառավարությունը խրախուսելու է, որ տնտեսական գործընթացներում ազատորեն ընդգրկվեն բոլոր կարող անձինք, կազմակերպությունները և իրենց նպաստը բերեն տնտեսության զարգացմանը:

3.1.1. ԳՈՐԾԱՐԱՐ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Ազատ ու ակտիվ տնտեսական գործունեություն ապահովող գործարար միջավայրը ժամանակակից աշխարհում ներդրումների ներգրավման՝ հետևաբար և տնտեսության կայուն զարգացման հիմքն է:

Կառավարությունը շարունակելու է գործարար միջավայրի բարելավման գործընթացը, նպատակ ունենալով առաջիկա հինգ տարիների ընթացքում հետևողական գործողություններ իրականացնել գործարարությամբ զբաղվելը դյուրացնելու և պետական անհարկի միջամտությունները բացառելու ուղղությամբ:

Կառավարության գործողությունների արդյունքում

- ներդրվելու են հաշվետվությունների ներկայացման և պետական ծառայությունները օգտվելու էլեկտրոնային համակարգեր,

- բարձրացվելու է գործարար միջավայրը կարգավորող իրավական դաշտի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության մակարդակը,

- աշխատանքներ են տարվելու տարբեր պետական մարմիններ կրկնվող տեղեկատվությամբ հաշվետվությունների ներկայացման պահանջները բացառելու ուղղությամբ,

- կրճատվելու և պարզեցվելու է տնտեսական գործունեության թույլատրական համակարգը,

- ներդրվելու են արտադրանքի որակի ապահովման, ստանդարտացման և համապատասխանության հավաստման ժամանակակից գործուն մեխանիզմներ,

- կրճատվելու են շինարարական թույլտվության ստացման ընթացակարգը և ժամկետը՝ միաժամանակ ուժեղացնելով վերահսկողությունը նորմատիվ պահանջների կատարման նկատմամբ,

- վերացվելու են անտեղի վարչարարական խոչընդոտները,
- հողի լիարժեք օգտագործման նպատակով ներդրվելու են արդյունավետ սեփականատիրության ապահովման գործուն մեխանիզմներ,
- օպտիմալացվելու է տեսչական համակարգը, ստուգող մարմիններում ներդրվելու են ռիսկերի վրա հիմնված ստուգման մեխանիզմները, բարձրացվելու է գործընթացի թափանցիկությունը:

3.1.2 ՓՄՁ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Փոքր և միջին ձեռնարկատիրությունը, ի շնորհիվ տնտեսության ճկունությունն ապահովելու, նորարարությունների գեներատոր հանդիսանալու, զբաղվածության մակարդակի բարձրացմանը նպաստելու, հասարակությունում միջին խավ ձևավորելու ներուժային հնարավորությունների, հանդիսանում է տնտեսության երկարաժամկետ կայուն զարգացման երաշխիք: Ելնելով նշվածից՝ կառավարությունը շարունակելու է ՓՄՁ համար ոչ միայն նպաստավոր գործարար միջավայրի ստեղծման, այլ նաև ուղղակի աջակցության քաղաքականությունը, մասնավորապես՝

- կառավարությունն ապահովելու է ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը գործող և սկսնակ ձեռնարկություններին՝ վարկային միջոցների մատչելիության բարձրացման միջոցով: Ձեռնարկություններին ֆինանսական ռեսուրսներով ապահովելու ծրագիրը կենտրոնանալու է շրջաններում գրավի ապահովման խնդրի լուծման, ինչպես նաև ռիսկային և արդյունավետ նոր նախաձեռնությունների ֆինանսավորման ուղղությամբ: Բարձրացվելու է պետական ֆինանսական աջակցության արդյունավետությունը և նպատակայնությունը՝ հասցեականություն ապահովող գործիքների կիրառմամբ,

- կառավարությունն ապահովելու է ձեռնարկատիրական կրթության մատչելիություն: Այս ծրագրի շրջանակում հատկապես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների սկսնակ գործարարներն անվճար ձեռք կբերեն ձեռնարկատիրական հմտություններ: Հատուկ ծրագրեր կիրառվեն կանանց գործարարության զարգացման համար,

- կառավարությունն աջակցելու է գործող և սկսնակ ձեռնարկություններին՝ շուկաներին հասանելիություն ապահովելու համար: Ձեռնարկություններն աջակցություն կստանան միջազգային և տարածաշրջանային ցուցահանդեսներին և համաժողովներին մասնակցության, ինտերնետային կայքերի, գովազդային վահանակների, ապրանքների փաթեթավորման և բրենդավորման գծով,

- կառավարությունն ապահովելու է տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն փոքր և միջին ձեռնարկություններին,

- աջակցություն է ցուցաբերվելու արտահանման ուղղվածություն ունեցող, հատկապես, վերամշակման արդյունաբերության ոլորտում գործող փոքր և միջին ձեռնարկություններին, արտադրանքի արտահանման կազմակերպման աշխատանքներում:

3.1.3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսական զարգացման համար էական է կայացած ֆինանսական միջնորդության համակարգի առկայությունը, որի նպատակը ներքին խնայողություններից և այլ աղբյուրներից գոյացող միջոցներն արդյունավետ ներդրումներին ուղղորդելն է:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսությունում ֆինանսական

միջնորդության անցած տարիների ձեռքբերումների (մասնավորապես, վարկային ներդրումների բարձր աճի տեմպերի) պահպանումը և ծավալների շարունակական մեծացումն առանցքային են տնտեսական աճի ապահովման գործում: Այս ոլորտում կառավարության գործունեության հիմնական թիրախն է լինելու ֆինանսական միջոցները տնտեսության որակական կառուցվածքի բարելավմանն ուղղելը: Նման քաղաքականության կարևորագույն ուղղությունն է ֆինանսական ռեսուրսների հասանելիության և գործիքների բազմազանության ապահովումը: Առաջնորդվելով այս սկզբունքներով՝ կառավարությունը միջոցներ կձեռնարկի խթանելու մատուցվող ֆինանսական ծառայությունների շրջանակի ընդլայնումը և բարձրացնելու դրանց հասանելիությունը՝ կիրառելով լիզինգային, արտոնյալ վարկավորման և այլ մեխանիզմներ: Նշված գործիքների կիրառումն առաջին հերթին կնպաստի փոքր և միջին ձեռնարկատիրության, գյուղատնտեսության ոլորտի ֆինանսավորման ծավալների ընդլայնմանը:

Գիտակցելով ապահովագրական համակարգի կարևորությունը ֆինանսական շուկայի կայացման, ձեռնարկատիրական ռիսկերի նվազեցման արդյունավետ մեխանիզմների ստեղծման, ինչպես նաև առողջապահական ծառայությունների մատչելիության և այլ սոցիալական խնդիրների լուծման համար՝ կառավարությունը խրախուսելու է ապահովագրական ծառայությունների դերի հետագա աճը: Կիսանվի գյուղատնտեսության բնագավառում ապահովագրական համակարգի ներդրումը, որը հնարավորություն կտա պաշտպանել գյուղատնտեսությամբ զբաղվողներին անբարենպաստ բնակլիմայական պայմանների ազդեցությամբ պայմանավորված նշանակալի ֆինանսական կորուստներից: Աշխատանքներ կտարվեն առողջապահական ապահովագրության համակարգի ներդրմանն ուղղությամբ, որը կնպաստի բնակչության համար առողջապահական ծառայությունների մատչելիության բարձրացմանը:

Իրականացվելու են կենսաթոշակային համակարգի բարեփոխումները, որոնք նպաստելու են խնայողությունների ավելացմանը, առավել երկարաժամկետ վարկային ռեսուրսների ստեղծմանը և ներդրումային ծրագրերի ֆինանսավորման հարցում ֆինանսական համակարգի դերի մեծացմանը:

Կառավարությունը շարունակելու և կատարելագործելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների բնակարանային պայմանների բարելավմանն ուղղված հիփոթեքային շուկայի զարգացման ծրագիրը՝ բնակչության համար բարձրացնելով հիփոթեքային վարկերի մատչելիությունը, առանձնակի ուշադրություն դարձնելով գյուղական բնակավայրերին:

Այս միջոցառումների իրականացման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հետ սերտ համագործակցության շարունակման և ընդլայնման արդյունքում նախատեսվում է տարեցտարի բարձրացնել տնտեսությունում իրական և ֆինանսական հատվածների ինտեգրման աստիճանը:

3.1.4. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՃՅՈՒՂԵՐԸ

3.1.4.1. Արդյունաբերությունը

Տնտեսության արդիականացումը, դիվերսիֆիկացումը և արդյունավետ ճյուղային կառուցվածքի ձևավորումը կայուն տնտեսական զարգացման ապահովման անհրաժեշտ նախադրյալներից են: Կառավարության մոտեցումները արդյունաբերության քաղաքականության ոլորտում կառուցվելու են՝ հաշվի առնելով

նշված նպատակների իրագործման անհրաժեշտությունը:

Կառավարությունը շարունակելու է իրականացնել ներքին ռեսուրսների վրա հիմնված, մրցունակ և արտահանման ուղղվածություն ունեցող արդյունաբերության խթանման քաղաքականություն, որն ապահովելու է

- երկարաժամկետ տնտեսական աճի շարժիչ ուղորտների ձևավորումը՝ շեշտադրելով արտահանման զարգացումը,

- առաջադեմ տեխնոլոգիական ճյուղերի զարգացման խթանումը՝ նպաստավոր միջավայրի ստեղծման և ներդրումների խթանման միջոցով,

- ոլորտային ռազմավարության պլանավորման, որոշումների կայացման, իրականացման և արդյունքների գնահատման գործընթացներում հիմնական շահագրգիռ կողմերի (այդ թվում՝ մասնավոր հատվածի) ներգրավումը,

- համապատասխան իրավական ակտերով լրացուցիչ արտոնությունների սահմանումը այն խոշոր ներդրումային ծրագրերի համար, որոնք կպարունակեն տեխնոլոգիական նորարարություններ, կունենան արտահանման ուղղվածություն և կստեղծեն աշխատատեղեր,

- ոլորտին առնչվող պետական մարմինների միջև համագործակցության արդյունավետության բարձրացումը և իրավասությունների հստակեցումը:

Կառավարությունը հատուկ կարևորում է վերամշակող արդյունաբերության զարգացումը՝ նախապատվությունը տալով ներքին ռեսուրսների վերամշակման հետ կապված մրցունակ արտադրություններին: Սննդի արդյունաբերությունը շարունակվելու է դիտվել որպես գերակայություն՝ առանձնապես տեղական գյուղատնտեսական մթերքների վերամշակման մասով, հաշվի առնելով նրա խթանիչ դերը գյուղատնտեսության զարգացման համար: Կիրառելի արդյունաբերական արդի տեխնոլոգիաներով հագեցած ու ժամանակակից էկոլոգիական պահանջներին համապատասխանող նոր ձեռնարկությունների ստեղծումը՝ տեղական հումքի վերամշակման ավարտուն տեխնոլոգիական ցիկլ ապահովելու նպատակով:

ԼՂՀ տնտեսության համար հանքարդյունաբերության խիստ կարևորությամբ պայմանավորված՝ կառավարության անելիքներն ուղղված կլինեն ոլորտի պետական կառավարման արդյունավետության բարձրացմանը՝ հիմնական շեշտը դնելով պաշարների ռացիոնալ օգտագործման վրա: Իրականացվելու են համապատասխան ծրագրեր մասնավոր կապիտալի ներգրավման ուղղությամբ, բարելավվելու է օրենսդրական դաշտը՝ ստեղծելով բարենպաստ պայմաններ ոլորտում գործարար ակտիվության խթանման համար:

3.1.4.2. Գյուղատնտեսությունը և գյուղը

ԼՂՀ ագրարային ոլորտն ունի կարևոր ռազմավարական նշանակություն: Այն առաջին հերթին կարևորվում է երկրի պարենային ապահովության հիմնախնդրի լուծման տեսանկյունից, որը հանդիսանում է երկրի տնտեսական անվտանգության բաղադրիչներից մեկը:

Հաշվի առնելով երկրի զարգացման ու ազգային անվտանգության ապահովման համար ագրարային ոլորտի կարևորությունը՝ առաջիկա տարիներին ԼՂՀ կառավարությունը կորդերի գյուղի և գյուղատնտեսության խնդիրների միասնական դիտարկման քաղաքականություն, այսինքն գյուղատնտեսության արդյունավետության բարձրացմանը զուգընթաց գյուղում կստեղծի կյանքի համար հարմարավետ պայմաններ:

Երկրի ռազմավարական բնույթի հիմնախնդիր է գյուղական բնակավայրերի զարգացումը: Քանի որ գյուղական բնակավայրերում բնակչությունը հիմնականում զբաղված է գյուղատնտեսական արտադրությամբ, նշված տարածքներում կիրականացվի տնտեսական տարբերակված քաղաքականություն՝ նկատի ունենալով անհրաժեշտ պետական աջակցության ապահովումը:

Նշված ռազմավարական խնդիրների լուծման նպատակով առաջիկա տարիներին կառավարության գործունեությունն ուղղված կլինի

- գյուղատնտեսության համախառն արտադրանքի ավելացմանը և արտադրության եկամտաբերության բարձրացմանը,

- պարենային ապահովության մակարդակի բարձրացմանը, հիմնական պարենամթերքների ինքնաբավության նվազագույն մակարդակի ապահովման հիմնախնդրի լուծմանը,

- ԼՂՀ-ում միջազգային (մասնավորապես՝ Եվրամիության) չափանիշներին համապատասխան սննդամթերքի անվտանգության ապահովման համակարգի ներդրմանը,

- գյուղատնտեսական ոլորտի ապահովագրական համակարգի ներդրմանը: Հանրապետությունում նշված համակարգի ներդրումը թույլ կտա նվազեցնել գյուղացու կորուստները՝ կապված անբարենպաստ բնակլիմայական պայմանների և ֆորս-մաժորային իրավիճակների հետ,

- գյուղատնտեսության ոլորտի պետական կարգավորման գործընթացի կատարելագործմանը,

- գյուղատնտեսության հաշվառման համակարգի բարելավմանը,

- հողօգտագործման արդյունավետության, գյուղատնտեսական նշանակության հողերի բերրիության բարձրացմանը,

- բուսաբուծության ճյուղում ագրոտեխնիկայի առաջադիմական համակարգի ներդրմանը, բանջարաբուծության, դաշտային կերարտադրության և այգեգործության համաչափ զարգացման ապահովմանը, ջերմոցային և սառնարանային տնտեսությունների ստեղծմանը, սերմնաբուծության, սելեկցիայի, բույսերի պաշտպանության և կարանտինի միջոցառումների արդյունավետության բարձրացմանը,

- անասնաբուծության (մասնավորապես՝ տոհմային անասնաբուծության զարգացմանը), անասնաբուծության համակարգի բարելավմանը և անասնաբուծական միջոցառումների արդյունավետության բարձրացմանը,

- գյուղատնտեսական հումքի վերամշակման զարգացմանը, վերամշակող կազմակերպությունների ռացիոնալ տեղաբաշխմանը, առաջավոր տեխնոլոգիաների ներդրմանը և արտադրանքի մրցունակության բարձրացմանը, մարքեթինգային աջակցությանը և հումք արտադրողների հետ պայմանագրային հարաբերությունների զարգացմանը,

- ռոռզման համակարգի բարելավմանը, ռոռզվող հողատարածքների ավելացմանը, ռոռզման ժամանակակից (կաթիլային, անձրևային) տեխնոլոգիաների ներդրմանը,

- գյուղատնտեսական տեխնիկայի և տեխնոլոգիայի շարունակական արդիականացմանը, մասնավորապես՝ լիզինգային արտոնյալ հիմունքներով գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների ձեռքբերման աջակցությանը,

- վարկային ռեսուրսների ձեռքբերման մատչելիության բարձրացմանը, վարկային միջոցների արդյունավետ օգտագործման նկատմամբ վերահսկողության ուժեղացմանը,

- բուսաբուծական և անասնաբուծական արտադրանքի արտադրության

խթանմանը՝ աջակցության տարբեր գործիքների կիրառմամբ,

- գյուղատնտեսական ոլորտի տեղեկատվական և խորհրդատվական համակարգի բարելավմանը,

- ոլորտում կադրերի պատրաստմանը և մասնագետների որակավորմանը,

- գյուղական տարածքների համաչափ և կայուն զարգացմանը, գյուղական բնակչության եկամուտների ավելացմանը,

- գյուղական ենթակառուցվածքների, մասնավորապես՝ միջհամայնքային ճանապարհների բարելավմանը:

Կառավարությունը՝

- առանձնակիորեն շեշտադրում է առաջիկա տարիներին սեփական արտադրության հաշվին հիմնական պարենամթերքի ինքնաբավության հիմնախնդիրը: Այդ ուղղությամբ միասնական, արդյունավետ և հիմնավորված քաղաքականության իրականացման համար կմշակվի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման հայեցակարգը», որի իրագործումը հնարավորություն կտա բարձրացնել երկրի պարենային ապահովվածության ու անվտանգության մակարդակը,

- անհրաժեշտ է համարում արտադրությունից մինչև վերջնական սպառումը սննդի շղթայի բոլոր փուլերում բուսական և կենդանական ծագման սննդամթերքի անվտանգության ապահովմանն առնչվող գործառույթները կենտրոնացնել մեկ կառույցում, ինչը կբացառի այդ գործառույթների կրկնությունը այլ կառույցների կողմից, ինչպես նաև կնպաստի դրանց առավել արդյունավետ իրականացմանը,

- արդիական է համարում «Գյուղատնտեսության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի նախագծի մշակման և ընդունման խնդիրը, որով կսահմանվեն գյուղատնտեսության զարգացման պետական քաղաքականության մշակման և իրականացման, սննդամթերքի շուկայի կարգավորման, գյուղատնտեսության ոլորտի մրցունակության և ներդրումային գրավչության բարձրացմանն ուղղված պետական քաղաքականության հիմնական ուղղությունները, ինչպես նաև գյուղատնտեսության զարգացման պետական աջակցության ուղղությամբ իրականացվող ծրագրերի ուղղվածությունը,

- կապահովի հողերի ոչ նպատակային օգտագործման դեպքում կիրառվող պատժամիջոցների խստացումը, հողակտորների կամավոր միավորման գործընթացին աջակցությունը, գյուղատնտեսական շրջանառությունից դուրս մնացած հողերի շրջանառության մեջ ներառման աշխատանքների իրականացումը, նոր հողերի յուրացման խրախուսումը, արոտավայրերի երկարաժամկետ վարձակալության խրախուսումը, ինչը հնարավորություն կտա բարձրացնել գյուղատնտեսական հողատեսքերի օգտագործման արդյունավետությունը: Հողերի բերրիության վերականգնման ու պահպանման նպատակով կառավարությունը կշարունակի սուբսիդավորման մեխանիզմի կիրառմամբ գյուղացիական տնտեսություններին մատչելի գներով հանքային պարարտանյութերի և այլ ագրոքիմիկատների մատակարարումը,

- կխթանի գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացումը,

- կշարունակի գարնանացան նոր և կերային մշակաբույսերի մշակության պետական աջակցության ծրագրերը, կխրախուսի ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած ջերմոցային և սառնարանային տնտեսությունների ստեղծումը, կաջակցի սելեկցիայի և սերմնաբուծության համակարգի զարգացմանը, հետևողական աշխատանքներ կտանի բույսերի պաշտպանության և կարանտինի միջոցառումների իրականացման

ուղղությամբ:

Անասնապահության ճյուղի արդյունավետության բարձրացման, անասնապահական մթերքների ավելացման, կայուն անասնահամաճարակային բարենպաստ իրավիճակի ապահովման, կենդանիների և մարդկանց համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների կանխման նպատակով կշարունակվեն բարձր մթերատու ցեղերի ներմուծման և ընտրասերման ճանապարհով անասունների տեղական ցեղերի տոհմային հասկանիչների բարելավման, ինչպես նաև անասնաբուժասանիտարական համալիր միջոցառումները:

Առանձնահատուկ ուշադրություն կդարձվի գյուղատնտեսական հումք վերամշակող կազմակերպությունների գործունեության ակտիվացմանը՝ կարևորելով հումք արտադրող-վերամշակող կողմերի միջև պայմանագրային հարաբերությունների ստեղծումը, արդիական տեխնոլոգիաների կիրառումը, արդյունավետ մենեջմենթը և մարքեթինգային ծառայությունների զարգացումը:

Կշարունակվեն պետական աջակցությամբ ոռոգման համակարգերի վերականգնման, ոռոգման ցանցի արդիականացման աշխատանքները, կխթանվի ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաների ներդրումը, որոնք կբերեն ջրի խնայողության, ոռոգվող տարածքների ավելացման և բույսերի բերքատվության բարձրացման:

Կշարունակվի նաև մեքենատրակտորային պարկի թարմացման քաղաքականությունը, մասնավորապես աջակցություն կցուցաբերվի լիզինգային արտոնյալ հիմունքներով գյուղտեխնիկայի և սարքավորումների ձեռքբերմանը:

Կարևորելով գյուղատնտեսության բնագավառում պետության վարած քաղաքականության ու տեղի ունեցող գործընթացների մասին հասարակայնության իրազեկվածությունը, ինչպես նաև գյուղատնտեսության ոլորտում նոր մեթոդների և տեխնոլոգիաների կիրառումը՝ կառավարությունը աշխատանքներ կիրականացնի ոլորտի տեղեկատվական ու խորհրդատվական համակարգի շարունակական բարելավման ուղղությամբ:

Գյուղական տարածքների համաչափ ու կայուն զարգացման, գյուղական բնակչության եկամուտների ավելացման, գյուղում կյանքի որակի բարձրացման նպատակով գյուղական համայնքներում կխթանվի ոչ գյուղատնտեսական գործունեության այլ տեսակների զարգացումը, գյուղմթերքների մեծածախ շուկայի ձևավորումը, տոնավաճառների կազմակերպումը, գյուղական ենթակառուցվածքների՝ գյուղական ճանապարհների ու տրանսպորտային ժամանակակից ցանցերի բարելավումը, հեռահաղորդակցության ժամանակակից տեխնոլոգիաներից օգտվելու հնարավորությունների բարձրացումը, խմելու և ոռոգման ջրով, գազով, էլեկտրաէներգիայով ապահովումը, բժշկական ծառայությունների հասանելիությունը, կրթա-մշակութային կյանքի աշխուժացումը:

3.1.4.3 Քաղաքաշինությունը

Քաղաքաշինության բնագավառում իրականացվող քաղաքականությունը նպատակ է հետապնդելու ապահովել բնակավայրերի կայուն զարգացում՝ շինարարության, ճարտարապետության և շինհինդուստրիայի ծրագրերի մշակմամբ և իրականացմամբ:

Գործուն միջոցներ կձեռնարկվեն ապօրինի և անորակ շինարարության կանխարգելման ու վերջինիս նկատմամբ վերահսկողության ուժեղացման ուղղությամբ: Կկատարելագործվի բնագավառը կարգավորող օրենսդրությունը:

Կառավարության ուշադրության կենտրոնում շարունակելու են մնալ կառույցների

սեյսմակայունության և հուսալիության ապահովման խնդիրները՝ սեյսմազինվածության բարձրացմանը նպատակաուղղված կանխարգելիչ, ինժեներապաշտպանական միջոցառումների ծրագրերի մշակման և իրականացման միջոցով:

Կիրականացվի տարածքային պլանավորման ու ճարտարապետության ոլորտում քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի բազայի ձևավորումը: Քայլեր կձեռնարկվեն համայնքների գլխավոր հատակագծերի մշակման ուղղությամբ:

Մեծ ուշադրություն կդարձվի նախագծա - նախահաշվային փաստաթղթերի մշակման որակի բարձրացմանը և կատարելագործմանը՝ այն համապատասխանեցնելով նախագծման ժամանակակից պահանջներին: Կատարելագործվելու և արդիականացվելու է ոլորտի իրավական բազան:

3.1.4.4. Զբոսաշրջությունը

Զբոսաշրջության ոլորտում կառավարության նպատակն է ապահովել ԼՂՀ այցելող զբոսաշրջիկների թվաքանակի կայուն աճ և ավելի երկարատև դարձնել Արցախում նրանց գտնվելու ժամանակահատվածը, ինչը կնպաստի ֆինանսական միջոցների ներհոսքի աճին, նոր աշխատեղերի ստեղծմանը, արտերկրում Արցախի դրական վարկանիշի ձևավորմանը:

Այդ առումով կառավարությունն իրականացնելու է հետևյալ աշխատանքներն ու ծրագրերը՝

- գյուղական զբոսաշրջության զարգացման ապահովում, զբոսաշրջային գործունեության ապակենտրոնացում դեպի շրջաններ, հանրապետության բոլոր շրջաններում հյուրանոցային ցանցի ընդլայնման, գյուղական զբոսաշրջային տների համակարգի, զբոսաշրջային այլ ենթակառուցվածքների զարգացման խրախուսման գործուն մեխանիզմների մշակում և գործարկում:

- ԼՂՀ առանձին նոր զբոսաշրջավայրերի ստեղծում, ընդգրկում զբոսաշրջային երթուղիներում, դրանց նկարագրերի ձևավորում, բրենդավորում և թիրախային շուկաներում պատշաճ ներկայացում:

- զբոսաշրջության ոլորտի իրավական դաշտի կատարելագործում՝ ուղղված ոլորտում կազմակերպչական և տնտեսական գործունեության համար առավել բարենպաստ միջավայրի ստեղծմանը:

- զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների ցանցի տարածում ԼՂՀ ամբողջ տարածքով:

- արդյունավետ մարքեթինգային քաղաքականություն, հայրենական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացում միջազգային զբոսաշրջային շուկայում, ԼՂՀ-ի՝ որպես գրավիչ և բարենպաստ զբոսաշրջային երկրի նկարագրի ձևավորում:

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար Արցախ այցելելու առավել բարենպաստ պայմանների ստեղծում:

- հայրենական զբոսաշրջային արդյունքի մրցունակության ապահովում:

3.1.5. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ

3.1.5.1. Էներգետիկան

Էներգետիկ համակարգը, հանդիսանալով յուրաքանչյուր տնտեսության զարգացման համար անհրաժեշտ ենթակառուցվածք, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից դիտարկվում է որպես գերակա ճյուղ: Էներգետիկայի

բնագավառում իրականացվող քաղաքականության հիմնահարցերից մեկը հանդիսանում է հուսալի ենթգամատակարարումը:

Այս համատեքստում ենթագետիկայի համակարգում իրականացվող քաղաքականությունը՝ ուղղված լինելով երկրի ենթագետիկ անկախության ապահովմանն ու անվտանգության բարձրացմանը, հիմնականում նպատակադրում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային պաշարների յուրացման և էլեկտրական ցանցերի վերակառուցման ու տեխնիկական վերազինման պետական նպատակային ծրագրերի իրագործումը:

Մոտակա տարիներին նորակառույց հիդրոկայանները «Սարսանգ» ՀԷԿ-ի հետ միասին տարեկան կարտադրեն մոտ 400 մլն կՎտ /ժամ էլեկտրաէներգիա:

ԼՂՀ տնտեսությանը և բնակչությանը որակյալ և անխափան էլեկտրաէներգիայի մատակարարման նպատակով կվերազինվեն էլեկտրական ցանցերը և էլեկտրատեղակայանքները, կկառուցվեն նոր ենթակայաններ:

Էլեկտրաէներգետիկ համակարգում կառավարության ծրագրերի կարևոր բաղադրիչներից մեկը կլինի ենթգամատակարարման հուսալիության բարձրացումը՝ ենթագետիկ համակարգի օղակաձև սնուցման միջոցով, որի համար կիրականացվեն ԼՂՀ-ն ՀՀ-ին կապող Առաջաձոր-Քարվաճառ - Ջոդ էլեկտրահաղորդման երկրորդ բարձրավոլտ օդային գծի նախագծի կազմման աշխատանքները:

Տնտեսության վրա ներկրվող ենթակառուցվածքի ազդեցության նվազեցումը և սեփական ենթակառուցվածքի միջոցով ենթագետիկ պահանջարկի բավարարումը ԼՂՀ կառավարության առաջնահերթ խնդիրներից են:

Գազամատակարարման ոլորտում միջոցներ կիրականացվեն սպասարկման որակի բարձրացման և անվտանգ գազամատակարարման ապահովման ուղղություններով:

3.1.5.2. Ջրամատակարարումը և ջրահեռացումը

Ջրամատակարարման և ջրահեռացման բնագավառում կառավարությունը կարևորում է մատակարարվող ջրի որակի և անհրաժեշտ քանակի ապահովումը, մատուցվող ծառայությունների որակի բարելավման նպատակով համակարգի տեխնիկական վերազինումը և ջրի կորստի էական նվազեցումը, ենթգատար ջրամատակարարման համակարգերի փոխարինումը ինքնահոս համակարգերով, ջրի հաշվառման համակարգի ներդրումը և զարգացումը, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման և վերակառուցման, ինչպես նաև կեղտաջրերի մաքրման գործնառնությունը արդիական տեխնոլոգիաների ներդրումը, օրվա կարգավորիչ ջրամբարների վերանորոգումն ու վերակառուցումը, համակարգի պատշաճ շահագործումը և պահպանումը:

Ոռոգման համակարգերի զարգացման բնագավառում կնպատակադրվեն ոռոգման ջրի արդյունավետ կառավարումը, գործող ջրատնտեսական օբյեկտների վերականգնումն ու վերակառուցումը, սուբարտեզյան ջրհորների պոմպերի և պոմպակայանների վերականգնումը, ջրաչափական հանգույցների վերակառուցումը, պատվարների կայունության ապահովումը, նոր ջրագծերի կառուցումը, ջրի կորուստների կրճատումը:

Խմելու և ոռոգման ջրի համակարգերի բարեփոխումների երկարաժամկետ ծրագրերի իրականացման նպատակով նախատեսվում է բնագավառում օրենսդրական դաշտի կատարելագործում, ԼՂՀ ամբողջ տարածքում ջրային համակարգերի հաշվառման գործընթացի ավարտում:

Կիրականացվեն նաև առանցքային հիդրոտեխնիկական կառուցվածքների պատշաճ պահպանման, նորոգման և ամրապնդման աշխատանքներ, որով կապահովվի այդ կառուցվածքների անվտանգ և անխափան շահագործումը:

3.1.5.3. Տրանսպորտային ենթակառուցվածքները

Տրանսպորտի բնագավառում կառավարության քաղաքականության հիմնական նպատակը շարունակում է մնալ կանոնավոր երթուղիների և ընդհանուր փոխադրումների ցանցի և աշխարհագրության ընդլայնումը, սպասարկման որակի բարձրացումն ու հանրապետության ավտոմոբիլային պարկի թարմացումը, հանրապետական և տեղական նշանակության ավտոճանապարհների շարունակական կառուցումը, հիմնանորոգումը և պահպանումը:

Կիրագործվի ոլորտում առաջնային համարվող ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումների կազմակերպման ծրագիրը: Այդ գործընթացն իրականացնելու և չսպասարկվող համայնքներն ավտոբուսային երթուղիների ցանցում ընդգրկելու նպատակով շարունակվելու է երթուղիների սպասարկման իրավունքի հատկացման համար փաթեթային մրցույթների կազմակերպումը, մայրաքաղաքի ավտոբուսային պարկը պահանջվող քանակի և դասի ավտոբուսներով համալրումը, ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումների միասնական չվացուցակի ներդրումը և կանգառների կահավորումը:

Ոլորտում սպասարկման որակը բարելավելու ու երթևեկությունն ավելի կարգավորված կազմակերպելու նպատակով կառավարությունը նախատեսում է ներդրումներ ներգրավել նաև ավտոկայարանային գործունեության կազմակերպման բնագավառում:

Օդային տրանսպորտի ոլորտի կայացումը թույլ կտա նոր տեմպեր հաղորդել հանրապետության տնտեսության զարգացմանը, ինչպես նաև ավելացնել զբոսաշրջիկների հոսքը:

Քաղաքացիական ավիացիայի բնագավառում քաղաքականությունն ուղղված կլինի առաջին հերթին Ստեփանակերտ-Երևան-Ստեփանակերտ ուղղությամբ օդային կանոնավոր կապի ապահովմանն ու զարգացմանը, ինչպես նաև այլ ուղղություններով օդային հաղորդակցությունների ստեղծմանը, ուղևորների, ուղեբեռների, փոստի արագ և անվտանգ փոխադրումների կազմակերպմանը:

Կշարունակվի իրավական դաշտի կատարելագործումն՝ ուղղված ավիացիոն և թռիչքային անվտանգության ապահովմանը:

Շարունակական բնույթ կկրի Ստեփանակերտի օդանավակայանի հագեցվածության զարգացման գործընթացը, հատուկ տեխնիկայի պարկը կհամալրվի այնպիսի միջոցներով, որոնք թույլ կտան առանց սահմանափակումների շահագործել աներոդորը յուրաքանչյուր եղանակային պայմաններում և սպասարկել տարբեր տիպերի օդանավեր:

Աերոնավիգացիոն և օդերևութաբանական ծառայությունների կայունությունն ապահովելու նպատակով միջոցներ կձեռնարկվեն առկա համակարգի պահպանման և նոր աներոնավիգացոն հնարավորությունների ստեղծման ուղղությամբ:

Կիրականացվեն փոքր ավիացիայի զարգացման աշխատանքներ, ինչն իր հերթին կնպաստի գյուղատնտեսական աշխատանքների արագ ու արդյունավետ կազմակերպմանը, քարտեզագրման և հետախուզական աշխատանքների զարգացմանը:

Կառավարությունը կխթանի ոլորտի մասնագետների պատրաստման և վերապատրաստման կազմակերպմանը, փորձի փոխանակմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

3.1.5.4. Հեռահաղորդակցությունը

Փոստային կապի զարգացման ուղղությամբ կիրականացվեն փոստային բաժանմունքների հետագա վերակառուցման և տեխնիկական կահավորման աշխատանքները, կընդլայնվի սպասարկման ոլորտը և կբարձրացվի մատուցվող ծառայությունների որակը:

Հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում հեռարձակման զարգացման և թվային համակարգի ներդրման ծրագրի շրջանակներում ավարտին կհասցվի հեռուստառադիոհեռարձակման թվային համակարգի ներդրման գործընթացը, ինչի արդյունքում Արցախի հեռուստատեսության հաղորդումների հեռարձակումը կապահովվի ԼՂՀ ամբողջ տարածքում:

Բջջային կապի ոլորտում նախատեսվում է ապահովել նոր սերնդի և համաշխարհային արդի չափանիշներին համապատասխանող 2.5G և 3G համակարգերի ներդրում, ինչը հնարավորություն կտա բնակչությանը օգտվել ավելի բարձրորակ բջջային կապից, ինչպես նաև նոր տեսակի ծառայություններից:

Կապուղիների արդիականացման ուղղությամբ նախատեսվում է անցկացնել օպտիկամանրաթելային մալուխ Ասկերան - Մարտակերտ - Հաթերք, Ստեփանակերտ - Կարմիր Շուկա - Մարտունի - Ստեփանակերտ (օղակաձև), Կարմիր Շուկա - Հաղորթ ուղղություններով՝ ընդգրկելով տեղակայված բնակավայրերը: Նախատեսվում է նաև ստորգետնյա կապուղու շինարարություն Դրմբոն-Վարդենիս (ներառյալ Շահումյանի շրջան) և Դրմբոն-Ստեփանակերտ ուղղություններով: Նշված աշխատանքները իրականացնելու արդյունքում երկու և ավելի անգամ կավելացվի ինտերնետ հոսքի մուտքը Ստեփանակերտ և շրջկենտրոններ:

Կառավարությունը առանձնահատուկ կարևորելով տեղեկատվական հեռահաղորդակցության տեխնոլոգիաների /SՏՏ/ դերը՝ որպես տնտեսության ընդհանուր առաջընթացի, արտադրողականության բարձրացման, կառավարման, ինովացիոն և գիտակրթական համակարգերի, ինչպես նաև համապատասխան ենթակառուցվածքների զարգացման հիմնական գործոն, շարունակելու է երկրում համացանցի օգտագործման հնարավորությունների ընդլայնմանը, ոլորտի կադրերի՝ ժամանակի պահանջներին համապատասխան պատրաստման ու վերապատրաստմանը, տեղական ՏՏ շուկայի ձևավորմանն ուղղված քաղաքականությունը:

3.1.6. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Բնապահպանության և բնօգտագործման ոլորտում կառավարության քաղաքականությունը նպատակաուղղված է լինելու՝

- շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական ու բուսական աշխարհի, բնության հատուկ պահպանվող տարածքների վրա վնասակար ներգործությունների կանխարգելմանը կամ նվազեցմանը,

- բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործմանն ու վերականգնմանը,

- բնապահպանական և տնտեսական օգուտի ու վնասի հետազոտման միջոցով հավասարակշռված բնապահպանական միջավայրի ապահովմանը,

Բնապահպանության և բնօգտագործման բնագավառում առկա խնդիրների լուծման և բնագավառի պետական կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով իրականացվելիք ծրագրերն ու միջոցառումները նպատակաուղղվելու են՝

- բնապահպանության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման հստակ մեխանիզմների ներդրմանը,

- տնտեսական բոլոր ծրագրերի գծով շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունների իրականացմանը,

- բնության և շրջակա միջավայրի պահպանման նկատմամբ վերահսկողության առավել բարձր չափանիշների սահմանմանը,

- բնական ռեսուրսների օգտագործման նկատմամբ վերահսկողության ուժեղացմանը,

- շրջակա միջավայրին հասցված վնասների փոխհատուցման նոր մեխանիզմների ներդրմանը,

- բնական պաշարների, այդ թվում՝ կենսառեսուրսների պահպանության, արդյունավետ օգտագործման և վերարտադրության ծրագրերի իրականացմանը,

- բնական պաշարների, այդ թվում՝ կենսառեսուրսների հաշվառման, կադաստրների և ռեեստրների ստեղծմանը,

- անտառային էկոհամակարգերի պահպանությանը, դեգրադացված անտառային էկոհամակարգերի վերականգնմանը, անտառային պաշարների շարունակական ու արդյունավետ օգտագործմանը և անտառների արդյունավետ կառավարման ապահովմանը,

- անտառի տնտեսական, բնապահպանական և սոցիալական խնդիրները կարգավորող կայուն անտառկառավարմանն ուղղված նոր մեխանիզմների ներդրմանը և անտառների կայուն կառավարման նպատակով անտառների հաշվառման և մոնիթորինգի համակարգի ստեղծման ծրագրի իրականացմանը,

- օրինական անտառօգտագործումը խթանող և ապօրինի օգտագործմանը խոչընդոտող տնտեսական մեխանիզմների ներդրմանը,

- անտառապատման ու անտառվերականգնման ծավալների աճի ապահովմանը, ինչպես նաև նշված աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով նոր տեխնիկական միջոցների և տեխնոլոգիաների ներդրմանը,

- «հատում-անտառվերականգնում-անտառաճեցում» նոր սկզբունքի ներդրմանը,

- անտառային կենսաբազմազանության պահպանությամբ և կայուն օգտագործման անհրաժեշտությամբ պայմանավորված անտառային էկոհամակարգերի բնապահպանական միջոցառումների իրականացմանը,

- անտառօգտագործման այլ գերակա ուղղությունների զարգացման ապահովմանը, մասնավորապես անտառների ռեկրեացիոն հնարավորությունների, զբոսաշրջության և որսորդական տնտեսությունների զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացմանը,

- անտառների պահպանության ու պաշտպանության միջոցառումների իրականացմանը, մասնավորապես մարդածին հրդեհների և արտադրական արտանետումների, թափոնների և այլ բացասական ազդեցությունների կանխարգելմանը,

- թափոնների պետական հաշվառմանը, դրանց գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների և հեռացման վայրերի ռեեստրների ստեղծմանն ու վարման կարգերի սահմանմանը,

- հասարակության բնապահպանական իրազեկության բարձրացմանը և

Էկոլոգիական կրթության և դաստիարակությանն ուղղված ծրագրերի իրականացմանը:

Բնօգտագործման ոլորտում առանձնահատուկ կարևորություն է տրվելու ընդերքօգտագործման բնագավառին, որը ռազմավարական նշանակություն ունի աշխատատեղերի և տնտեսական ակտիվության ապահովման տեսանկյունից: Ընդերքօգտագործման բնագավառի զարգացման, ընդերքի ողջամիտ ու համալիր օգտագործման, ինչպես նաև մասնավոր ներդրումների աճի ապահովման նպատակով իրականացվելու են պետական ծրագրեր ու միջոցառումներ ուղղված՝

- ԼՂՀ տարածքում ընդերքի ռեսուրսային և տնտեսական ներուժի գնահատմանը,

- օգտակար հանածոների հանքավայրերի որոնմանը, հետախուզմանն ու գնահատմանը,

- երկրաբանական ուսումնասիրությունների արդյունքների հավաստիության ապահովման նպատակով օգտակար հանածոների նմուշների լաբորատոր փորձաքննությունների իրականացման համար ժամանակակից սարքավորումներով հագեցված լաբորատորիաների ստեղծմանը,

- հետախուզված պաշարների և ընդերքի մասին այլ տեղեկատվության պետական փորձաքննության իրականացմանը և օգտակար հանածոների հանքավայրերի և երևակումների ֆոնդի ստեղծմանը, որը հնարավորություն կտա պոտենցիալ ներդրողներին ստանալ համակարգված տեղեկություններ ընդերքի պաշարների վերաբերյալ:

Առաջիկա տարիներին որոնողական աշխատանքները կկազմակերպվեն արտերկրներից հրավիրված մասնագետների և երկրաբանական խմբերի ներգրավմամբ, որին զուգահեռ նաև համապատասխան ծրագրեր կիրականացվեն անհրաժեշտ կադրերի պատրաստման և վերապատրաստման ուղղությամբ:

3.2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

3.2.1. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կառավարությունը կշարունակի իր քաղաքականությունը աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտներում, այն առավելագույնս ուղղելով ԼՂՀ Նախագահի նախընտրական ծրագրի հիմնադրույթների իրագործմանը:

Որպես ոլորտի գերակայություններ՝ կշարունակվեն մնալ բնակչության սոցիալական պաշտպանվածության մակարդակի հետևողական բարձրացումը և ժողովրդագրական իրավիճակի բարելավումը, որոնց կավելանա աշխատանքի, աշխատավարձի կարգավորման և զբաղվածության բնագավառի հիմնախնդիրների լուծումը:

Բնակչության սոցիալական պաշտպանվածության մակարդակի բարձրացման նպատակով կշարունակվեն պետական նպաստների, կենսաթոշակների և սոցիալական բնույթ կրող այլ հատուցումների չափերի հետևողական բարձրացումները՝ ապահովելով դրանց համադրելիությունը կենսաապահովման նվազագույն բյուջեի չափի հետ:

Ժողովրդագրական իրավիճակի բարելավման համատեքստում կառավարությունը կշարունակի աշխատանքներն՝ ուղղված հանրապետությունում ծնելիության, բազմազավակության ու ամուսնությունների խրախուսմանը և ակտիվ միգրացիոն քաղաքականության շնորհիվ ներհոսքի խթանմանը:

Աշխատանքի, աշխատավարձի կարգավորման և զբաղվածության բնագավառում պետական քաղաքականությունն ուղղված կլինի բնակչության գործազրկության մակարդակի իջեցմանը, աշխատանք փնտրողների մրցունակության բարձրացմանը,

աշխատողների իրավունքների օրենսդրական պաշտպանվածության ամրապնդմանն ու աշխատանքային պայմանների բարելավմանը:

Նշված նպատակներին հասնելու համար կառավարությունը կշարունակի վերջին 5 տարիների ընթացքում սկսած ծրագրերի իրականացումը, որոնցից իրենց նշանակությամբ և արդիականությամբ առանձնացման արժանի են.

- նորաստեղծ ընտանիքներին պետական աջակցություն ցուցաբերելու նպատակով միանվագ գումարի հատկացման ծրագիրը՝ ապահովելով այդ գումարի չափի հետևողական աճ,

- աշխատանքային հարաբերությունների մեջ չգտնվող կանանց հղիության և ծննդաբերության միանվագ նպաստների տրամադրումը, որի չափը կբարձրացվի նվազագույն ամսական աշխատավարձի չափի բարձրացմանը համապատասխան:

Կառավարությունը կշարունակի գործող պետական նպաստների տրամադրումը՝ ծրագրում ընդգրկելով սոցիալապես խոցելի այլ խմբերի և ապահովելով նպաստների չափերի աճը:

Կշարունակվի ծննդյան միանվագ նպաստների տրամադրումն ու ծնելիության խթանման այլ միջոցառումների իրականացումը՝ ապահովելով բազմազավակ ընտանիքների պետական երաշխիքների ընդլայնումը:

Շարունակական բնույթ են կրելու նախորդ տարիներին մեկնարկած՝ կենսաթոշակային ապահովության համակարգի կատարելագործմանն ուղղված աշխատանքները, ինչը կուղեկցվի կենսաթոշակների չափերի ու շահառուներին մատուցվող ծառայությունների որակի բարձրացմամբ: Կսկսվի պարտադիր և կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգերի ներդրման գործընթացը՝ ապահովելով քաղաքացու ներդրումների և կենսաթոշակի չափի միջև ուղղակի կապ և կրճատելով աշխատավարձի վճարման գործում առկա ստվերը:

Կառավարությունը կշարունակի հաշմանդամների սոցիալական վիճակի բարելավմանն ուղղված քաղաքականությունը, մասնավորապես իրականացնելով՝ հասարակությունում նրանց ինտեգրման, հավասար (մատչելի) պայմանների ապահովման, բժշկական, սոցիալական և հոգեբանական վերականգնման աշխատանքները:

Կառավարությունը կարևորում է նաև տարեցների, միայնակ և խնամքի կարիք ունեցող, անօթևան մարդկանց կյանքի որակի բարձրացումը, Հայրենական մեծ պատերազմի վետերանների, հաշմանդամ դարձած զինծառայողների, ինչպես նաև զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանության բարելավումը, նրանց տրամադրվող դրամական օգնությունների չափերի պարբերաբար բարձրացումը:

Կշարունակվեն նաև վեց և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքներին բնակտարածքով ապահովման, իսկ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց՝ նաև տրամադրված բնակարանի կահավորման ծրագրերը:

Կակտիվացվի հայրենադարձության գործընթացը՝ շեշտադրում կատարելով սփյուռքահայության հետ կապերի ամրապնդման և հայրենադարձության գործընթացում վերջինիս դերի բարձրացման, վերաբնակիչների սոցիալական ադապտացմանն ու ինտեգրման ծրագրերի, ինչպես նաև վերաբնակ ընտանիքներով համալրված բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման հայեցակարգերի մշակման և իրականացման վրա:

Առանձնահատուկ ուշադրության կարժանանան Ադրբեջանից բռնագաղթված կարիքավոր ընտանիքները, որոնց սոցիալական խնդիրների լուծմանը կցուցաբերվի

աջակցություն:

3.2.2. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Առողջապահության ոլորտում կառավարության առաջնահերթ խնդիրը շարունակում է մնալ առողջապահական ծառայությունների մատչելիության մակարդակի և որակի բարձրացումը:

Ազգաբնակչության առողջության պահպանմանը, հիվանդացության, մահացության և հաշմանդամության մակարդակների նվազեցմանն ուղղված համալիր միջոցառումների մեջ կշարունակի գերակա համարվել առաջնային բուժօգնության օղակի զարգացումը:

Կառավարությունը կիրականացնի մի շարք միջոցառումներ՝ նպատակաուղղված գյուղական բնակչության բժշկական սպասարկման բարելավմանը, մասնավորապես՝

- գյուղական բուժհաստատությունների շենքային պայմանների բարելավում, անհրաժեշտ գույքով և բժշկական պարագաներով համալրում,

- կադրերի շարունակական վերապատրաստում,

- սանիտարական մեքենաներով ապահովում:

Կբարեփոխվեն «Շտապ բժշկական օգնության» կառուցվածքը և աշխատանքի սկզբունքները՝ ապահովելով բուժօգնության նշված տեսակի ամբողջ շղթայում հիվանդի (տուժածի) վարման վերահսկողություն մասնագիտացված (կենտրոնացված) կառույցի համապատասխան մասնագետների միջոցով:

Մասնագիտացված բուժօգնության (հիվանդանոցային) ծառայության ոլորտում կառավարությունը կարևորում է մատուցվող ծառայություններին նոր որակ հաղորդելու անհրաժեշտությունը: Այս ուղղությամբ նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- հիվանդանոցային ցանցի արդիականացմանը զուգընթաց ախտորոշման և բուժման նոր մեթոդների ու տեխնոլոգիաների ներդրում,

- կադրերի մասնագիտական վերապատրաստում,

- հիվանդությունների բուժման ստանդարտների ընդունում:

Կառավարությունը կարևորում է բժշկական ապահովագրական համակարգի աստիճանական ներդրումը և զարգացումը: Նախատեսվում է պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության իրականացման ծավալների վերանայում՝ ապահովագրական բժշկության ներդրման տեմպերի ու ծավալների աճին զուգընթաց: Կիրականացվեն նաև մի շարք միջոցառումներ, որոնք թույլ կտան բարձրացնել համակարգի աշխատանքի արդյունավետությունը, մասնավորապես,

- պետական պատվեր իրականացնողների նկատմամբ վերահսկողության արդյունավետ մեխանիզմների կիրառում,

- մասնավոր բժշկության զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծում,

- բուժաշխատողների աշխատանքի վարձատրության աստիճանական բարձրացում,

Հատուկ ուշադրություն կդարձվի դեղային քաղաքականությանը՝ առանձնացնելով հետևյալ նախապատվությունները՝

- արտոնյալ և անվճար կարգով բնակչության սահմանված խմբերին մատչելի, անվտանգ և արդյունավետ դեղորայքով առավելագույնս ապահովում,

- հանրապետություն դեղորայքի ներկրման, պահպանման պայմանների և իրացման գործընթացի նկատմամբ վերահսկողական գործառույթների իրականացում,

- առավել բարենպաստ պայմաններ կստեղծվեն գյուղական բնակավայրերում դեղատնային գործունեության ծավալման համար:

Կառավարությունը կշարունակի գերակա համարել բնակչության հիգիենիկ հակահամաճարակային անվտանգությունը՝ շարունակելով իրականացնել

- վարակիչ և զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման ծրագիր,

- շրջակա միջավայրի գործոնների բացասական ազդեցության կանխարգելմանն ուղղված ծրագրեր,

- ուղորտի նորմատիվ իրավական համապատասխան բազայի մշակում,

- ծառայության նյութատեխնիկական բազայի թարմացման և համալրման ծրագիր,

- ուղորտում ընդունված ստանդարտներին համապատասխան շենքային պայմանների բարելավման աշխատանքներ:

3.2.3. ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Կրթության ոլորտում կառավարության կողմից իրականացվելիք միջոցառումների շնորհիվ, ապահովվելու է կրթական բոլոր աստիճանների՝ նախադպրոցականից մինչև հետբուհական մասնագիտական կրթության ներդաշնակ գործունեություն, որի հիմնախնդիրն է լինելու ուղորտում բարեփոխումների շարունակական իրականացման շնորհիվ կրթության ոլորտի արդյունավետության աստիճանական բարձրացումը:

Կշարունակվեն բարեփոխումների իրականացման աշխատանքներ՝ ուղղված կրթության առաջատար ոլորտի՝ հանրակրթության առանցքային խնդիր համարվող 12-ամյա կրթության զարգացմանը, որն իր մեջ ներառում է պարտադիր հիմնական և միջնակարգ, այդ թվում՝ ավագ դպրոցի հոսքային ուսուցման իրականացումը:

Հանրակրթության հիմնախնդիրների լուծման և համակարգի զարգացման նպատակով կառավարության կողմից ձեռնարկվող միջոցառումների շնորհիվ բյուջետային և բարեգործական ֆինանսական միջոցները կնպատակաուղղվեն ուսումնական հաստատությունների նոր շենքերի, մարզադահլիճների կառուցման, հիմնանորոգման, գույքի և սարքավորումների, ուսումնալաբորատոր սարքերի և նյութերի, ժամանակակից տեղեկատվական միջոցների ձեռքբերման աշխատանքներին:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսուցման առաջավոր տեխնոլոգիաների ներդրման նպատակով շարունակվելու են համակարգչային կաբինետներով կահավորման, ինչպես նաև «Նոր ուսումնական ռազմավարության» ծրագրի ընդլայնման գործառնությունները:

Միջոցներ են ձեռնարկվելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կարիքների գնահատման և ուսումնական հաստատություններում նրանց ընդգրկման ու անհրաժեշտ պայմանների ստեղծման ուղղությամբ:

Շարունակական բնույթ կկրեն ինչպես մանկավարժների աշխատավարձի բարձրացման քաղաքականությունը, այնպես էլ ուսման որակի բարձրացման և սովորողների անձի ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանքների նկատմամբ պետական վերահսկողության ուժեղացման, ուսումնական գործընթացի արդյունավետության ապահովման նպատակով անհրաժեշտ ուսումնամեթոդական օժանդակության ցուցաբերման, սովորողների գիտելիքների մակարդակի բացահայտման նպատակով ներքին և արտաքին ստուգումների հստակեցման գործընթացները:

Կառավարությունը կշարունակի իրականացնել հետևողական աշխատանքներ արհեստագործական և միջին մասնագիտական կրթության շարունակականության ապահովման համար, աստիճանաբար պայմաններ ստեղծելով արհեստագործական ուսումնարանների ցանցի ընդլայնման, շենքային պայմանների բարելավման, ըստ

մասնագիտության ժամանակակից սարքավորումներով, տեխնիկական և տեղեկատվական հագեցվածությամբ լաբորատորիաների և կաբինետների կահավորման, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսումնանյութական հիմքի արդիականացման, ուսման որակի բարձրացման գործառնությունների իրականացման համար:

Շարունակվելու են հանրապետությունում երեխաների նախադպրոցական կրթության ապահովման աշխատանքները ուղղված՝ պետական մանկապարտեզների ցանցի ընդլայնմանը, հանրակրթական ուսումնական հաստատություններում նախադպրոցական խմբերի գործունեության համար պայմանների ստեղծմանը, նոր մանկապարտեզների շենքերի կառուցմանը, վերակառուցման և հիմնանորոգման աշխատանքների իրականացմանը:

Սովորողների արտադպրոցական դաստիարակության հիմնախնդիրների ապահովման նպատակով շարունակվելու են աշխատանքները արտադպրոցական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավման, գյուղական վայրերի սովորողների ընդգրկվածության ապահովման և վերաբնակեցված շրջաններում արտադպրոցական նոր հաստատությունների ստեղծման ուղղությամբ:

Կրթության ոլորտում առաջնահերթ խնդիր է հանրապետության տնտեսական զարգացման նպատակով որակյալ մասնագետների պատրաստումը, որի համար կարևորվում է հանրապետության բուհական կրթության որակական առաջընթացի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և արտերկրի առաջավոր բուհերում ուսանելու լայն հնարավորությունների ստեղծումը, հատկապես՝ մագիստրոսական և հետբուհական կրթության ասպարեզում:

Շարունակվելու է բուհերի ընդունելության կազմակերպումը միասնական քննությունների արդյունքներով, վերանայվելու է ընթացակարգը՝ հեշտացնելով մուտքը բուհ և միաժամանակ խստացնելով առաջադիմության և ավարտական հմտություններին վերաբերող պահանջները:

Շարունակվելու են առաջին դասարան ընդունվողներին դրամական աջակցության, դպրոցականներին անվճար դասագրքերով ապահովման, Հայաստանի Հանրապետության բուհերում սովորող ԼՂՀ ուսանողներին դրամական օժանդակության տրամադրման, ինչպես նաև արտերկրում սովորող ուսանողների ուսման և կեցության ծախսերի փոխհատուցման գործընթացները:

Գիտության ոլորտում կառավարությունը հետևողական աշխատանքներ է իրականացնելու հանրապետության գիտական և գիտակիրառական ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Այդ նպատակով Հայաստանի Հանրապետության գիտական կառույցների հետ համագործակցության շնորհիվ և Արցախի գիտական կենտրոնի ներգրավմամբ միջոցներ են ձեռնարկվելու երկրի տնտեսական զարգացմանը նպաստող գիտական հետազոտությունների իրականացման ուղղությամբ՝ ընդգրկելով գերակա այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են գյուղատնտեսությունը, արդյունաբերությունը, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը, ինչպես նաև ֆունդամենտալ և հասարակական գիտությունները:

3.2.4. ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Մշակույթի ոլորտում կառավարությունն իր քաղաքականության մեջ առաջնահերթ նշանակություն է տալիս ազգային մշակույթի պահպանմանը, ներկայացմանը, տարածմանը, հանրապետությունում մշակութային կյանքի աշխուժացմանը, քաղաքացիների՝ մշակութային գործունեություն իրականացնելու և մշակութային

ծառայություններին օգտվելու իրավունքի և մատչելիության ապահովմանը, հասարակության մշակութային ներուժի վերարտադրմանն ու զարգացմանը, միջազգային ասպարեզում մշակութային երկխոսության և բազմակողմանի հարաբերությունների ընդլայնմանն ու խորացմանը:

Առաջիկա տարիներին քայլեր կձեռնարկվեն արվեստի և մշակութային ժամանակակից ենթակառուցվածքների զարգացման և մշակութային գործընթացների խթանման ուղղությամբ: Այդ նպատակով՝

- կառավարությունը լուրջ ուշադրություն կդարձնի արվեստի տարբեր ոլորտներում երիտասարդ ստեղծագործական ներուժի ներգրավման, թատերահամերգային կազմակերպությունների ստեղծագործական գործունեության աջակցման, այդ թվում՝ մրցութային հիմունքներով ստեղծագործական պատվերների իրականացման, մրցունակ մշակութային արտադրանքի ստեղծման, մշակույթի օջախների, մասնավորապես, թատրոնների, թանգարանների, երաժշտական դպրոցների և երաժշտական քոլեջի շենքային պայմանների բարելավման և նյութատեխնիկական բազայի վերազինման, գյուղական բնակավայրերում մշակույթի շենքերի բարեկարգման, նոր գույքի ու սարքավորումների ձեռքբերման հարցերին:

- կառավարության ուշադրության կենտրոնում են գտնվելու մշակույթի ապակենտրոնացման քաղաքականության շարունակականության ապահովման, շրջաններում մշակութային կյանքի աշխուժացման, միջշրջանային կապերի ամրապնդման հարցերը: Ապահովվելու է մշակութային ծառայությունների մատչելիությունը, հասանելիությունը, բազմազանությունը, համաչափությունը հանրապետության ամբողջ տարածքում: Շարունակվելու է ԼՂՀ շրջաններում գեղարվեստական կրթական ծրագրեր իրականացնող հենակետային դպրոցների ստեղծման գործընթացը, ապահովվելու է երեխաների գեղարվեստական կրթությունն ու գեղագիտական դաստիարակությունը: Խթանվելու է ժողովրդական կիրառական-գեղագարդման արվեստի տեսակների՝ գորգագործության, ասեղնագործության, խեցեգործության, փայտի գեղարվեստական մշակման, մետաղագործության զարգացումը:

- մշակույթի ոլորտի կադրային քաղաքականությունը և մշակութային կրթությունը կուղղվի մշակույթի ոլորտի մասնագետների պատրաստմանը, մասնագետների կրթության փուլերի շարունակականության ապահովմանը:

Շարունակվելու է արտերկրից հրավիրյալ մասնագետների դասախոսությունների և վարպետության դասընթացների միջոցով համաշխարհային մշակութային կյանքի նորարարությունների և զարգացումների հետ ծանոթացման գործընթացը:

- կամրապնդվեն մշակութային կապերը Հայաստանի Հանրապետության և արտերկրի հետ, կիրականացվի մշակութային երկխոսության ընդլայնում, Սփյուռքի ակտիվ ներգրավում Արցախի մշակութային կյանքում: Առանձնակի ուշադրություն կհատկացվի տեղեկատվական քաղաքականության իրականացմանը, համահայկական մշակութային դաշտում արցախահայության մշակույթի ամրապնդմանը, ազգային բանահյուսության և ազգագրության զարգացմանն ու քարոզմանը, արտերկրում արցախյան մշակույթի հանրահռչակման ծրագրի իրականացմանը՝ համահայկական ներուժի ճիշտ օգտագործմամբ:

- շարունակվելու է ոլորտի զարգացմանն ուղղված պետական աջակցության ցուցաբերման իրավական հիմքերի մշակումը: Մշակույթի զարգացմանն ուղղված օրենսդրական դաշտի կատարելագործումը նպատակաուղղված կլինի մշակույթի ոլորտի արդյունավետ կառավարման մեխանիզմների ստեղծմանը, ոլորտում

կառավարման մարմինների լիազորությունների հստակեցմանը, մշակութային ընդհանուր ռազմավարության մշակմանը, մշակույթի կոնկրետ ոլորտների զարգացմանն ուղղված օրենսդրական դաշտի բարելավմանը:

Կառավարությունը կարևորում է նաև մշակույթի ոլորտի աշխատողների սոցիալական պաշտպանվածությունը:

Հուշարձանների պահպանության և ուսումնասիրման ոլորտի հիմնական խնդիրներն առնչվում են պատմամշակութային ժառանգության պահպանման, հանրահռչակման, արտերկրում արժանավայել ներկայացման և իրավական հիմքերի մշակման գործընթացներին: Այդ առումով կառավարությունը

- շարունակելու և ավարտին է հասցնելու ԼՂՀ տարածքում գտնվող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների փաստագրման, վկայագրման և պահպանական գոտիների կազմման աշխատանքները,

- շարունակելու է պատմամշակութային և բնապատմական արգելոցների ստեղծման, դրանց զարգացման և հանրահռչակման աշխատանքը,

- շարունակելու է համազգային նշանակություն ունեցող պատմամշակութային հուշարձանների հնագիտական պեղումների և ուսումնասիրման աշխատանքները՝ նպատակ ունենալով լրացնել արցախյան պատմագրության բացերը,

- շարունակելու և ընդլայնելու է գիտական, պատմական, մշակութային նշանակություն ունեցող հուշարձանների վերականգնման, ամրակայման և բարեկարգման աշխատանքները,

- շարունակելու և ավարտին է հասցնելու ԼՂՀ ամբողջ տարածքում պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության կառավարման համակարգի ձևավորումը:

Երիտասարդական քաղաքականության իրականացման ուղղությամբ կառավարությունը քայլեր կձեռնարկի ստեղծելու սոցիալ-տնտեսական, իրավական-քաղաքական, հոգևոր-մշակութային, կազմակերպական պայմաններ ու երաշխիքներ՝ երիտասարդների սոցիալական կայացման, նրանց ստեղծագործ ներուժն ի շահ հասարակության լիարժեք օգտագործելու համար:

Նշված նպատակներին հասնելու համար նախատեսվում է.

- միջգերատեսչական համագործակցության շրջանակներում պետական երիտասարդական քաղաքականության գերակայության սահմանում,

- երիտասարդությանը հանրապետության հասարակական - քաղաքական կյանքում ընդգրկվելիության ակտիվացման ուղղությամբ նոր տեխնոլոգիաների մշակում և ներդրում,

- երիտասարդության համար ոչ ֆորմալ կրթական ծրագրերի իրականացում, արտերկրում կարճաժամկետ և երկարաժամկետ կրթական ծրագրերի դիմող երիտասարդներին աջակցության ցուցաբերում,

- ժողովրդագրական իրավիճակի բարելավում՝ հասարակության մեջ ընտանիքի ինստիտուտի ամրապնդում,

- երիտասարդության զբաղվածության ոլորտում աշխատանքի տեղավորման և երիտասարդական շրջանում ձեռնարկատիրական գործունեության խթանման միջոցառումների իրականացում,

- երիտասարդության խոցելի խմբերի ինտեգրում հասարակությանը,

- տաղանդավոր երիտասարդների ունակությունների ու կարողությունների զարգացման աջակցություն, երիտասարդ գիտնականների ներուժի զարգացում,

- երիտասարդական քաղաքացիական և հասարակական նախաձեռնություններին

աջակցություն, երիտասարդական կառույցների գործունեության ակտիվացում,

- երիտասարդության քաղաքացիական, հայրենասիրական, հոգևոր-մշակութային դաստիարակությանն ուղղված միջոցառումների իրականացում, արժեքային կողմնորոշումների դրական դաշտի ձևավորում,

- աջակցություն երիտասարդական ակումբների, կազմակերպությունների, կենտրոնների ստեղծմանը, մասնավորապես գյուղական բնակավայրերում՝ ազատ ժամանցի նպատակային կազմակերպման առումով,

- պետական երիտասարդական ծրագրերի իրականացմանը շրջանների երիտասարդության ավելի ակտիվ ներգրավման ապահովում,

- Հայաստանի, Մփյուռքի ու արտերկրի երիտասարդական միավորումների՝ պետական և հասարակական հատվածի հետ համագործակցության ընդլայնում:

3.2.5. ՄՊՈՐՏԸ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում պետական քաղաքականության իրականացման ուղղությամբ առանցքային է համարում

- բնակչության առողջության ամրապնդումը,

- անհատի ներդաշնակ զարգացումը, աշխատունակության ու երկարակեցության ապահովմանն ուղղված պայմանների ստեղծումը,

- տարիքային և սոցիալական տարբեր խմբերի անձանց համար ֆիզիկական դաստիարակության անընդհատությունն ու ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու մատչելիությունը,

- նախագորակոչային և զորակոչային տարիքի դպրոցականների կենցաղում առողջ ապրելակերպի արմատավորումը, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության ֆիզիկական պատրաստվածության ապահովումը,

- զանգվածային ֆիզկուլտ-առողջարարական համայնքային, շրջանային, հանրապետական մարզական միջոցառումների անցկացումը,

- ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և առողջ ապրելակերպի քարոզչությունը,

- երիտասարդների ակտիվ հանգստի կազմակերպումը և նրանց ներգրավումը հանրապետության մարզական կյանքում,

- բարձրակարգ մարզիկների պատրաստումը, միջազգային ասպարեզում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հավաքական թիմերի և անհատ մարզիկների արդյունավետ մասնակցության ապահովումը,

- մարզական հերթափոխի պատրաստման գործում մարզական կազմակերպությունների, ֆեդերացիաների, մարզադպրոցների ծառայությունների որակի և արդյունավետության բարձրացումը,

- զանգվածային և մեծ սպորտի փոխադարձ կապի ու հավասարակշռված զարգացման համար նպաստավոր պայմանների ապահովումը (մարզաբազաների վերանորոգում և նորերի կառուցում, մարզահանդերձանքի ապահովում, ուսումնամարզական հավաքների կազմակերպում և անցկացում),

- հանրապետության հավաքական թիմերին անհրաժեշտ մարզահանդերձանքով և մարզագույքով ապահովումը,

- համահայկական խաղերի, միջազգային մրցաշարերի, Հայաստանի, Եվրոպայի և աշխարհի առաջնությունների մրցանակակիրների և նրանց մարզիչների խրախուսումը,

- հաշմանդամների տարբեր խմբերի համար ֆիզիկական կուլտուրայով ու սպորտով զբաղվելու նպատակով համապատասխան պայմանների ստեղծումը, մրցումների

անցկացումը և պետական աջակցությունը,

- ուղորտը կարգավորող իրավական դաշտի կատարելագործումը:

3.3. ՊԵՏԱԿԱՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

3.3.1. ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Արտաքին աշխարհի հետ ընդլայնվող շփումները և համագործակցության հետզհետե աճող ծավալները հատուկ կարևորություն են հաղորդում միասնական ու արդյունավետ արտաքին քաղաքականությանը, որն էլ ԼՂՀ պաշտպանության, անվտանգության և զարգացման կարևոր բաղադրիչն է: Այն կիրականացվի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի ղեկավարությամբ Արցախի անկախության և ազգային անվտանգության ապահովման համատեքստում:

Արտաքին քաղաքականության առանցքային ուղղություններից է դարաբաղա - ադրբեջանական հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացը: Կառավարությունը ջանքեր կգործադրի բանակցային գործընթացի բոլոր փուլերին՝ կարգավորման փիլիսոփայության շուրջ կարծիքների փոխանակումից մինչև կոնկրետ քայլերի և պայմանավորվածությունների մշակումն ու իրագործումը, ԼՂՀ լիարժեք մասնակցությունն ապահովելու ուղղությամբ:

Միաժամանակ կառավարությունն առաջնային կհամարի և կշարունակի քայլեր՝ ձեռնարկել Արցախն արտաքին աշխարհին ճանաչելի դարձնելու ուղղությամբ՝ նպատակ ունենալով հասնելու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային ճանաչմանը:

Առաջնորդվելով ԼՂՀ արտաքին քաղաքականության հիմքում ընկած հավասարակշռվածության և բազմաուղղվածության սկզբունքներով՝ կառավարությունը կձգտի բարիդրացիական հարաբերություններ պահպանել ինչպես Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Եվրոպայի, այնպես էլ տարածաշրջանային պետությունների հետ, ինչը պայմանավորված է մեր տարածաշրջանի յուրահատկությամբ և Սփյուռքի գործոնի առկայությամբ:

Կառավարության արտաքին քաղաքականության մեջ կարևոր ուղղություն է արտերկրում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների շահերի պաշտպանությունը:

Արտաքին քաղաքականության արդյունավետության բարձրացման նախապայմաններից է տեղեկատվական աշխատանքների ընդլայնումը, միջազգային հանրությանը ԼՂՀ-ում ընթացող դրական գործընթացների մասին տեղեկացումը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նոր՝ հակամարտության հետ չառնչվող վարկանիշի ձևավորումը:

Արտաքին քաղաքականության գերակա ուղղություններից է նաև արտաքին բարենպաստ պայմանների ստեղծումը՝ ուղղված հանրապետության զարգացմանը և այդ նպատակով օտարերկրյա ներդրումների ներգրավմանը, Սփյուռքի հետ համագործակցության խորացմանը, միջազգային ինտեգրացիոն գործընթացներին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մասնակցությանը և տարածաշրջանային կառույցների հետ համագործակցության աշխուժացմանը:

Աշխարհաքաղաքական արագընթաց զարգացումները նոր խնդիրներ են դնում արտաքին քաղաքական գերատեսչության առջև՝ թելադրելով վարել ավելի հետևողական, ճկուն և կանխարգելիչ ակտիվ դիվանագիտություն: Այս առումով լուրջ անելիքներ ունեն նաև արտերկրում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության

մշտական ներկայացուցչությունները և Եվրոպական կառույցներում, մասնավորապես ԵԱՀԿ-ում, Եվրոպայի խորհրդում և Եվրամիությունում աշխատող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտաքին գործերի նախարարության դիվանագետները: Կարևորելով այս աշխատանքը՝ միջոցներ կձեռնարկվեն արտերկրում ԼՂՀ մշտական ներկայացուցչությունների գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Կառավարությունն առաջնահերթ խնդիր է համարում Արցախ-Հայաստան-Սփյուռք փոխհարաբերությունների զարգացումն ու խորացումը և Հայաստանի ու Սփյուռքի ներուժի լիարժեք օգտագործման ապահովումը:

Հայաստանի և Սփյուռքի կառույցների ու կազմակերպությունների հետ վերջին տարիներին հաստատված գործնական կապերն ու շփումները հնարավորություն են ընձեռում քաղաքական, տնտեսական և մշակութային փոխհարաբերությունների ոլորտներում նախաձեռնելու և համակարգելու քայլեր՝ ուղղված արտաքին աշխարհում ԼՂՀ շահերի պաշտպանությանը, տնտեսական զարգացման աջակցմանն ու ներդրումների ներգրավմանը, ինչպես նաև հոգևոր-մշակութային համագործակցության ընդլայնմանը:

Հայաստանի և Սփյուռքի հետ համակողմանի կապերի ամրապնդումն ու նյութական և մարդկային ներուժի առավելագույնս արդյունավետ ներգրավումը հանրապետության առջև ծառայած սոցիալ-տնտեսական, քաղաքական և այլ հիմնախնդիրների լուծման գործում ուղղվելու է մասնավորապես՝

- դարաբաղա - ադրբեջանական հակամարտության խաղաղ կարգավորման և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային ճանաչման ուղղությամբ համագործակցության ընդլայնմանն ու խորացմանը,

- համահայկական միջոցառումներին /խորհրդաժողովներ, հանդիպումներ, մարզական և մշակութային միջոցառումներ, փառատոներ և բիզնես-ֆորումներ/ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ներկայացվածության և մասնակցության ապահովմանը,

- կառույցների ու կազմակերպությունների և առանձին անհատների ու ձեռներեցների ջանքերով հանրապետությունում իրականացվող մարդասիրական և զարգացման ծրագրերին աջակցության ապահովմանը, պետական և հասարակական կառույցների հետ համագործակցության խորացմանը, դրա արդյունավետության և թափանցիկության բարձրացմանը,

- աշխարհասփյուռ հայության՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մասին տեղեկացվածության բարձրացմանը և համահայկական տեղեկատվական դաշտի մշակման աջակցմանը:

Կառավարությունն ակնկալում է մեր հայրենակիցների գործարար ակտիվությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, որը բարեգործական օգնությունից աստիճանաբար պետք է անցնի տնտեսական փոխշահավետ համագործակցության հարթություն: Այսօր մենք Սփյուռքի օգնությամբ կարող ենք օտարերկրյա շուկաներ մտնել համեմատաբար ցածր ծախսերով, ինտեգրվել այլ երկրների տնտեսությանը՝ իրականացնելով փոխշահավետ համագործակցություն:

Կառավարությունը հետամուտ կլինի Հայաստանի և Սփյուռքի հետ հետագա կապերի խորացմանը և ակնկալում է Հայաստանի և Սփյուռքի աջակցությունը հանրապետության զարգացման գործում:

3.3.2. ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ԼՂՀ կառավարությունը շարունակելու է իր քաղաքականությունը դատախիզավական համակարգի գործունեության կատարելագործման և օրենսդրական բազայի հետագա զարգացման ուղղությամբ՝ ժողովրդավարական սկզբունքների հիման վրա: Այս առումով կառավարությունը նախատեսում է.

- հաստատել «Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ցուցումները»: Այն մեծապես կնպաստի նորմատիվ իրավական ակտերի մշակման միասնական մոտեցումների ձևավորմանը և իրավական հստակության ապահովմանը,

- միջոցներ ձեռնարկել գործող իրավական ակտերի պաշտոնական ինկորպորացիա և թարգմանություն կատարելու ուղղությամբ,

- երկրում գործող իրավական ակտերը հանրությանը հասանելի դարձնելու նպատակով ԼՂՀ-ում ստեղծել և ներդնել իրավական տեղեկատվական անվճար համակարգ,

- մշակել և ԼՂՀ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնել ԼՂՀ քրեական, քաղաքացիական և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերի նախագծերը,

- նպաստել փաստաբանության զարգացմանը, որպես քաղաքացիական հասարակության և իրավական պետության կարևորագույն ինստիտուտ: Համապատասխան փոփոխություններ կառաջարկվեն «Փաստաբանության մասին» ԼՂՀ օրենքում, որով կընդլայնվի անվճար իրավաբանական օգնության շրջանակները՝ հիմք ընդունելով ոչ թե դատական գործի տեսակը, այլ օգնություն ստացողի սոցիալական կարգավիճակը,

- դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում ներդնել էլեկտրոնային եղանակով հարկադիր աճուրդի կազմակերպման և անցկացման համակարգ:

Նոտարիատի, քաղաքացիական կացության ակտերի և իրավաբանական անձանց պետական գրանցման ոլորտներում վարչարարության արդյունավետությունը բարձրացնելու, ժամկետները կրճատելու և քաղաքացիների սպասարկման համար առավել բարենպաստ պայմաններ սահմանելու նպատակով ԼՂՀ կառավարությունը հանդես կգա անհրաժեշտ օրենսդրական նախաձեռնություններով: Վերացվելու են այն գործառույթները, որոնք քաղաքացիների համար ստեղծում են բյուրոկրատական քաշքշուկ և անհարմարություններ:

3.3.3. ՊԱՇՏՊԱՆՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՆԱԿԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ

Կառավարության առաջնահերթ ուշադրության կենտրոնում կլինեն երկրի պաշտպանության հետ կապված խնդիրները՝ երկրի պաշտպանության հետագա ամրապնդումը, բանակի մարտունակության բարձրացումը և հայրենասիրական ոգու պահպանմանն ուղղված քաղաքականության իրականացումը: Մեր քաղաքացիները պետք է զգան, որ նրանք ապրում են պաշտպանված, ապահով և անվտանգ երկրում, ինչը կարևորագույն պայման է հանդիսանում մարդկային կապիտալի զարգացման համար: Բանակաշինության և պաշտպանունակության մակարդակի բարձրացման կարևորագույն խնդիրներն են լինելու

- ԼՂՀ զինված ուժերի մարտական պատրաստվածության մակարդակին հետագա բարձրացում՝ մեր երկրի ինքնիշխանության և տարածքային ամբողջականության պաշտպանության խնդիրների լուծման նպատակով.

- պետական սահմանի ամուր պաշտպանություն և հակառակորդի ցանկացած ոսնձգություն արդյունավետ կանխարգելում ու կասեցում.

- հանրապետության զորահավաքային պատրաստականության կատարելագործում.

- պաշտպանության բանակի աստիճանաբար վերափոխում պրոֆեսիոնալ բանակի, արհեստավարժ պայմանագրային զինճառայողներով ՊԲ շարքերի համալրում.

- բանակի և քաղաքացիական հասարակության միջև ավելի արդյունավետ և փոխգործակցված կապի հաստատում.

- սպառազինության ժամանակակից միջոցներով ՊԲ համալրման գործընթացի շարունակում, նյութատեխնիկական հագեցվածության որակական մակարդակի բարձրացում: Կառավարության գործողություններն առաջին հերթին ուղղված են լինելու բանակի մարտունակության շարունակական բարձրացմանն ու սպառազինմանը: Այս առումով կառավարությունը նախատեսում է՝

- պաշտպանական ներուժը համապատասխանեցնել արհեստավարժության, կարգապահության, թափանցիկության և վերահսկելիության արդիական չափանիշներին և ունենալ մրցունակ բանակ,

- հասարակության մեջ ամրապնդել զինվորական պարտադիր ծառայության ինստիտուտի նկատմամբ վստահությունը՝ սոցիալական և կրթական պայմաններին շարունակական բարելավման միջոցով,

- զորացրվողներին ապահովել աշխատանքով և արտոնյալ ուսման հնարավորություններով:

Կառավարությունը հանդես կգա օրենսդրական նախաձեռնությամբ, որով կմեծացնի ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողությունը զինված ուժերի նկատմամբ:

Կառավարությունը կշարունակի առանձնահատուկ ուշադրություն դրսևորել ազատամարտիկների, նրանց ընտանիքների, ինչպես նաև զինվորական թոշակառուների կենսական հարցերի նկատմամբ, գործուն միջոցառումներ կիրականացնի հանրապետության զինված ուժերի պրոֆեսիոնալ կազմի սոցիալական խնդիրների լուծման համար:

3.3.4. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.3.4.1. Կառավարման համակարգի բարեփոխումները

Պետական կառավարման բարեփոխումները կուղղվեն կառավարման մարմինների գործունեության արդյունավետության և պետական ծառայողի պատասխանատվության ու դերի բարձրացմանը, գործառույթների հստակեցմանը, ընդունվող որոշումներին հասարակության մասնակցության ընդլայնմանը:

Քաղաքացիներին ծառայություններ մատուցելու մշակույթի ներդրումը, մասնավոր ծառայությունների որակին համադրելի որակի պետական ծառայությունների ընդլայնումը թույլ կտան հսկողական գործառույթներ իրականացնողից անցնել քաղաքացիներին որակյալ մրցունակ պետական ծառայություններ մատուցողի և նրա շահերին ծառայողի կարգավիճակին:

Նպատակ ունենալով բացառել երկրի ինստիտուցիոնալ կայացման վտանգումը, ապահովել մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը և օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը՝ կառավարությունը նախատեսում է.

- հստակեցնել պետական կառավարման մարմինների գործառույթները,

- ընդլայնել պետական կառավարման գործընթացներին քաղաքացիական

հասարակության մասնակցությունն ու համակարգի վերաբերյալ իրազեկվածությունը, բարելավել պետական կառավարման համակարգի գործունեության թափանցիկությունը,

- զարգացնել պետական համակարգի ռազմավարական կառավարման ներուժը՝ ընթացիկ կառավարման գործառույթները փուլ առ փուլ պատվիրակելով տեղական ինքնակառավարման մարմիններին,

- կադրային ներուժի ամրապնդման նպատակով ավելացնել համակարգում աշխատելու գրավչությունը՝ ներդնելով սոցիալական երաշխիքների տրամադրման քաղաքականությունը,

- ներդնել համակարգի աշխատողների վարքագծի օրինակելի կանոնները և սահմանել պատասխանատվություն խախտումների և անհարկի խոչընդոտների ստեղծման համար:

Այդ առումով կառավարությունը ձեռնամուխ է լինելու պետական և մասնավոր հատվածների միջև գործընկերության հայեցակարգի ներդրմանը, ինչն ապահովելու է կարենորագույն ազգային ու տեղական ծրագրերի համատեղ մշակումը և իրականացումը, պետության այնպիսի գործառույթների բացառումը, որոնք կարող են վնասել ազատ շուկայական մրցակցային հարաբերությունների բնականոն զարգացմանը: Մասնավորին կպատվիրակվեն գործակալական, սպասարկման կամ մասնագիտական այն ծառայությունները, որոնք առավել արդյունավետ կարող են իրականացվել նրա կողմից:

Կառավարությունը պետական կառավարման գերակայություններից է համարում հանրային ծառայությունների բնագավառը կանոնակարգող օրենսդրության կատարելագործումը և համակարգի կայացումը:

Ուշադրության կենտրոնում կլինեն նաև ֆինանսական կառավարման և ծառայությունների մատուցման բնագավառներում պետական հատվածի թափանցիկության և գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով իրականացվող միջոցառումները:

Այդ նպատակով նախատեսվում է՝

- ստեղծել ճկուն և արդյունավետ գործող պետական կառավարման համակարգ, որի ձևավորող մեխանիզմները կգործեն աշխատելու կարողության, կարգապահության, բարոյականության, մասնագիտական բանիմացության և արհեստավարժության սկզբունքների հիման վրա.

- իրականացնել հստակ ծրագրեր՝ ուղղված պետական գույքի կառավարման արդյունավետության բարձրացմանը, պետական սեփականության արդյունավետ օգտագործմանը, սեփականության տարբեր ձևերի օպտիմալ համամասնությունների ձևավորմանը, պետական գույքի արդյունավետ կառավարման միջոցով պետական եկամուտների ավելացմանը: Կառավարությունը առաջիկայում կապահովի պետությանը պատկանող գույքային իրավունքների համապարփակ հաշվառումը: Պետությունը՝ որպես գույքի սեփականատեր, կհանդիսանա շուկայական հարաբերությունների լիարժեք մասնակից՝ առաջնորդվելով արդյունավետության սկզբունքով,

- վերացնել այն գործառույթները, որոնք ստեղծում են բյուրոկրատական անհարմարություն և քաշքշուկ՝ բիզնեսի և քաղաքացիների համար՝ ուժեղացնելով պետության կարգավորիչ դերը,

- շարունակել էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրման աշխատանքը՝ առաջնահերթ համարելով այն ոլորտները, որտեղ դրանց կիրառումը առավել

արդյունավետ է բնակչության և գործարարների համար,

- ներդնել բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամտի հայտարարագրերը հանրությանը հասանելի դարձնելու մեխանիզմներ.

Միաժամանակ կառավարությունը շարունակելու է ծրագրեր իրականացնել կոռուպցիոն ռիսկերի վերհանման և դրանց դեմ պայքարի ուղղությամբ: Կարևոր է բացառել ցանկացած տիպի և տեսակի կոռուպցիոն երևույթ: Ընդունվող ծրագրերի հիմքում դրվելու են կոռուպցիոն ռիսկերի բացահայտման և օրենսդրական փոփոխությունների հիմքով դրանց բացառման դրույթները: Ինչպես և ցանկացած ռիսկ, կոռուպցիոն ռիսկերը նույնպես կառավարելի են, ուստի կառավարությունը առաջին փուլում վերլուծության կենթարկի ոլորտային այն իրավական ակտերը, որոնք կարող են պարունակել նման «բացեր»: Կոռուպցիոն երևույթների անխուսափելի պատճառներից է մարդկային գործոնը, իրավական ակտերի անկատարությունը, ինչը հանգեցնում է որոշումներ կայացնելիս պաշտոնյաների ոչ միատեսակ մոտեցումների: Հաջորդ փուլում կառավարությունը կներկայացնի անհրաժեշտ փոփոխություններ, որոնցով կհստակեցվեն ինչպես պաշտոնյաների իրավունքների ու պարտականությունների շրջանակները, այնպես էլ կայացվող որոշումների կոնկրետ ընթացակարգերը: Կառավարությունը նոր ընդունվող ծրագրերի ու որոշումների իրավական փորձաքննության հետ համատեղ կուսումնասիրի դրանք նաև հակակոռուպցիոն տեսանկյունից:

Գույքային իրավունքների պետական գրանցման ուղղությամբ նախատեսվում է՝

- մշակել էլեկտրոնային եղանակով անշարժ և շարժական գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման դիմումների և փաստաթղթերի ներկայացման կարգը,

- հնարավորություն ստեղծել, անկախ գույքի գտնվելու վայրից, իրավունքների պետական գրանցման և տեղեկատվություն ստանալու համար դիմել և օգտվել կադաստրի պետական կոմիտեի կողմից մատուցվող ծառայություններից ցանկացած տարածքային ստորաբաժանումից:

Անշարժ գույքի կադաստրի համակարգի համար առաջնային ուղղություն է նաև տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների հետ աշխատանքի ապահովումը: Այդ նպատակով ուշադրություն կդարձվի ճշգրիտ քարտեզագրական և հողաշինարարական նյութերով վերոհիշյալ մարմինների ապահովմանը: Օրենսդրական փոփոխությունների հիմքով կբարձրացվի հողերի արդյունավետ կառավարումը և միաժամանակ տեղական ինքնակառավարման մարմինների համար ավելի մատչելի պայմաններ կստեղծվեն այդ ոլորտում իրենց վերապահված լիազորությունների կատարման համար: Այս ուղղությամբ մասնավորապես նախատեսվում է՝

- հանրապետության տարածքում խտացնել գեոդեզիական ցանցը, ամրացնել միջհամայնքային սահմանները, ճշգրտել կադաստրային քարտեզները և տեղագրական քարտեզներ կազմել բնակավայրերի համար,

- վերափոխել գեոդեզիական համակարգը համաշխարհային գեոդեզիական ստանդարտներին համապատասխան, անցնելով CK-42 համակարգից WGS-84 համակարգի,

- արբանյակային օրտոֆոտոների հիման վրա ստեղծել հանրապետության բազային տեղագրական քարտեզները և հիմքեր ստեղծել աշխարհատեղեկատվական համակարգերի ներդրման համար,

- օրենսդրական հիմքով պարզեցնել փոքր և միջին հողօգտագործողների հողերի

նպատակային նշանակության փոփոխությունների իրականացման գործընթացը:

3.3.4.2 Տարածքային կառավարումը և տեղական ինքնակառավարումը

Կձեռնարկվեն քայլեր, որոնք կապահովեն տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների եկամտային մասի շարունակական աճ՝ հարկման բազայի ճշտգրման և եկամուտների հավաքագրման մեխանիզմների կատարելագործման միջոցով:

Կառավարությունը ձեռնամուխ է լինելու կազմակերպելու համայնքի ղեկավարների, իսկ հետագայում՝ համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատողների և ավագանու անդամների կարճաժամկետ դասընթացների կազմակերպմանը՝ նպատակ ունենալով հասնել տեղական ինքնակառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների որակի, տեղական ինքնակառավարման ոլորտում կառավարման հմտությունների և ունակությունների մեծացմանը:

Կիրականացվեն աշխատանքներ՝ տարածքային անհամամասնությունների նվազեցման, ենթակառուցվածքների հասանելիության և ծառայությունների մատչելիության ավելացման համար, մասնավորապես՝

- տարածքային կառավարման մարմինների գործառույթների հստակեցում, կառավարման ժամանակակից տեխնոլոգիաների ներդրում, թափանցիկության ավելացում,
- տեղական ինքնակառավարման օրենսդրական դաշտի կատարելագործում,
- տեղական ինքնակառավարման մարմինների նորմատիվ ակտերի որակի բարձրացմանն ուղղված շարունակական միջոցառումներ,
- տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխումների իրականացում, աջակցություն միջհամայնքային միավորումների ստեղծմանն ու միջհամայնքային համագործակցության ինստիտուտի ներդրմանը,
- տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների ու ֆինանսական հնարավորությունների համապատասխանության ապահովմանն ուղղված միջոցառումներ:

Կառավարությունը առանձնահատուկ ուշադրություն է դարձնելու համայնքներում սոցիալական նշանակության օբյեկտների, ճանապարհների, ջրային համակարգերի, ընդհանուր և ռազմավարական նշանակության ենթակառուցվածքների ստեղծման վրա:

Տարածքային կառավարման մարմինների աշխատանքի արդյունավետության և դրանց աշխատողների կարգապահության և պատասխանատվության բարձրացման նպատակով կմշակվեն հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների կողմից շրջվարչակազմերին և շրջվարչակազմերի կողմից կառավարությանը տեղեկատվության տրամադրման կարգը, ձևերը և ժամկետները:

3.3.5. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Բյուջետային համակարգը և դրա կառավարումը կարևոր են թե արդյունավետ ծախսային քաղաքականության, թե իշխանությունների հանրային հաշվետվելիության առումով: Այս համատեքստում կառավարությունը բյուջետային քաղաքականության առավել կարևոր ուղղություններ է համարում՝

- համաշխարհային տնտեսության արագ փոփոխվող միջավայրի ու հնարավոր նոր մարտահրավերներին դիմակայելու անհրաժեշտության պայմաններում տնտեսական

իրավիճակին համապատասխան հարկաբյուջետային ցուցանիշների ծրագրավորումը և ճկուն հարկաբյուջետային քաղաքականության իրականացումը.

- հիմնականում ներքին ռեսուրսների օգտագործման վրա հիմնված քաղաքականության վարումը և բյուջետային դեֆիցիտի աստիճանաբար կրճատման միջոցով թիրախային արդյունքների ապահովումը.

- պետական եկամուտների հավաքագրման վարչարարության արդյունավետության բարձրացումը, որը կլինի եկամտային քաղաքականության գերակա ուղղություններից մեկը:

Կառավարությունը կարևորում է պետական միջոցներն արդյունավետ, նպատակային և թափանցիկ ծախսելը: Այս առումով՝

- ծախսերի փաստացի կատարումն իրականացվելու է սահմանված երկարաժամկետ-միջնաժամկետ ծախսային գերակայություններին համապատասխան: Բյուջետային ռեսուրսները պետք է վերաբաշխվեն դեպի առավել բարձր արդյունավետություն ունեցող ծրագրերը,

- պետական գնումների իրականացման ոլորտում կձեռնարկվեն միջոցներ՝ գնումների ընդհանուր ծավալում մրցակցային հիմունքներով կատարվող գնումների մասնաբաժինն ավելացնելու ուղղությամբ: Գնումների համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով կառավարությունը կշարունակի աշխատանքներն օրենսդրության բարելավման և էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման ուղղությամբ,

- կուժեղացվի բյուջետային միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործման նկատմամբ ֆինանսական հսկողությունը, կիրականացվեն ֆինանսական հսկողության համակարգի բարելավման աշխատանքներ,

- բարձրացվելու է պետական մարմինների բյուջետային կարգապահության ու պատասխանատվության աստիճանը:

3.3.6 ՀԱՐԿԱՑԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Առաջիկա տարիներին հարկային համակարգի կատարելագործումը ուղղված կլինի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների առավելագույն մակարդակի ապահովմանը՝ չխոչընդոտելով հանրապետությունում գործարարության զարգացմանը: Այդ առումով կշարունակվեն և կընդլայնվեն աշխատանքները չորս հիմնական ուղղություններով՝ հարկային մարմնի արդիականացում՝ նորարար տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ, հսկողական աշխատանքների արդյունավետ իրականացում, օրենսդրական մեխանիզմների կատարելագործում և հանրային իրազեկման աշխատանքների ընդլայնում՝ շեշտը դնելով հետևյալ միջոցառումների իրականացմանը.

- հարկման մեխանիզմների կատարելագործմանը, առավել օպտիմալ դրույքաչափերի սահմանմանը՝ վերացնելով հարկումից խուսափելու օրենսդրական սողանքները, ինչպես նաև պարզեցնելով և հստակեցնելով իրավական նորմերը,

- ընդերքօգտագործման բնագավառում հարկման մոտեցումների վերանայմանը,

- էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրմանը, որի կարևոր բաղադրիչները կհանդիսանան հաշվետվությունների էլեկտրոնային ներկայացման, հարկերի ավտոմատ հաշվառման և ռիսկային չափանիշներով ստուգումների իրականացման ենթահամակարգերը,

- ԼՂՀ տարածք ներմուծվող և ԼՂՀ տարածքից արտահանվող ապրանքանյութական արժեքների հաշվառման էլեկտրոնային համակարգի ներդրմանը, ներմուծվող և

արտահանվող ապրանքանյութական արժեքների հաշվառման հարաբերությունների օրենսդրորեն կարգավորմանը,

- ապառքների կառավարման էլեկտրոնային համակարգի ներդրմանը, հարկային պարտավորությունների մարման գործընթացի բարելավմանը: Դրան զուգահեռ անպարտաճանաչ հարկ վճարողների նկատմամբ կկիրառվեն պարտավորությունների գանձման նոր մեխանիզմներ,

- մրցույթների և ատեստավորումների անցկացման ընթացակարգի արդիականացմանը, հարկային ծառայողների պարտադիր ուսուցման ընթացակարգի ներդրմանը,

- հարկ վճարողների շահերի պաշտպանությանն ու նրանց սպասարկման մակարդակի բարձրացմանը, որով հարկման հարաբերություններում կընդլայնվեն ինքնագնահատման համակարգի կիրառման մոտեցումները,

- հարկ վճարողների համար պարբերաբար ուսուցումների կազմակերպմանը՝ ապահովելով հարկ վճարողների ժամանակին տեղեկացվածության աստիճանի բարձրացումը,

- հանրության հետ արդյունավետ համագործակցության ապահովմանը, հարկային բարեփոխումներին հասարակական կազմակերպությունների, հարկ վճարողների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմանը:

3.3.7 ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում կառավարությունը իր գործունեության ընթացքում իրականացնելու է աշխատանքներ՝ ուղղված մրցակցային միջավայրի բարելավմանը, տնտեսության առանձին ոլորտներում ոչ բնական մենաշնորհների սահմանափակմանը ու մրցակցության խթանմանը: Այս առումով կառավարությունը ծրագրավորում է աշխատանքներ իրականացնել հետևյալ հիմնական ուղղություններով.

- մրցակցային միջավայրի շարունակական բարելավում և պաշտպանություն,

- ինստիտուցիոնալ բարեփոխումներ: Հիմնվելով միջազգային լավագույն փորձի վրա, ընդլայնվելու են հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի իրավասություններն ու գործիքակազմը, ներդրվելու են մրցակցության պաշտպանության և բարելավմանն ուղղված ժամանակակից տեխնոլոգիական լուծումներ, կապահովվի իրականացվող աշխատանքների թափանցիկությունը և հրապարակայնությունը:

- հավասար մրցակցային պայմանների ապահովում: Խստացվելու է մենաշնորհ և գերիշխող դիրք ունեցող տնտեսավարող սուբյեկտների գործունեության նկատմամբ հսկողությունը, իրականացվելու է հակամրցակցային համաձայնությունների բացահայտումն ու կանխարգելումը, տնտեսական մրցակցության էապես խոչընդոտող, այդ թվում՝ մենաշնորհային և գերիշխող դիրքի հանգեցնող համակենտրոնացման պետական կարգավորումը՝ միաժամանակ անպատիժ չթողնելով ոչ մի հակաօրենսդրական գործողություն:

- չհիմնավորված գների բացահայտում և կարգավորում: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից սահմանված առաջին անհրաժեշտության (ռազմավարական) պարենային և ոչ պարենային ապրանքային շուկաներում իրացման կամ ձեռքբերման չհիմնավորված գների սահմանմամբ պայմանավորված անբարեխիղճ տնտեսավարող սուբյեկտների կողմից սպառողների շահերը վնասելու փորձի բացառում և (կամ) պատասխանատվության միջոցների

կիրառում:

3.3.8 ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ , ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ

Անվտանգության և հասարակական կարգի պահպանության ոլորտներում կառավարության ծրագրերի հիմքում դրվելու է հասարակության յուրաքանչյուր անդամի պաշտպանվածության մակարդակի բարձրացման խնդիրը: Նշված ծրագրերի կատարմանն ուղղված կառավարության գործողություններն իրականացվելու են ազգային անվտանգության առկա և հավանական սպառնալիքների բացահայտման ու կանխարգելման համատեքստում: Իրավապահ մարմինների գործունեությունը պետք է նպատակաուղղվի հասարակության շրջանում խաղաղության և համերաշխության հաստատմանը, անձ - իրավապահ մարմին հարաբերություններում անձանց իրավունքների և ազատությունների լիարժեք ապահովմանը: Կառավարության կողմից էապես խստացվելու է իրավապահ մարմինների ծառայողների կողմից անձանց իրավունքների խախտման համար պատասխանատվությունը և ապահովվելու են դրա անխուսափելիության գործնական երաշխիքները:

Ազգային անվտանգության և հասարակական կարգի պահպանության մարմինների գործունեության հիմնական նպատակները կշարունակեն մնալ

- սահմանադրական կարգի պահպանումը,
- պետական սահմանների պահպանությունը,
- քաղաքացու իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի պաշտպանությունը,
- ազգային անվտանգության և պետական պահպանության ապահովումը, հասարակության և պետության շահերի պաշտպանությունը,
- հանցագործությունների կանխարգելումը, հասարակական կարգի ու անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացումը,

- անչափահասների շրջանում հանցագործությունների ու իրավախախտումների կանխարգելման աշխատանքների միջնաժամկետ ծրագրի մշակումն ու իրականացումը:

Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառում կառավարության ծրագրերը նպատակաուղղված են լինելու աղետներից ու հնարավոր պատերազմների հետևանքներից մարդու կյանքին, առողջությանը և ունեցվածքին հասցվող վնասի նվազեցմանն ու բացառմանը: Կառավարությունը, գիտակցելով, որ հանրապետության կայուն զարգացումն ու մյուս առաջնահերթությունների իրականացումն անխուսափելիորեն պետք է կատարվեն աղետների ռիսկի կառավարման և քաղաքացիական պաշտպանության գործուն համակարգ ունենալու համատեքստում, նախատեսում է՝

- ուժեղ և կայուն ինստիտուցիոնալ ազգային բազայի հիման վրա նվազեցնել տարերային և տեխնաձին ռիսկերը,
- իրականացնել ռիսկերի բազմակողմանի բացահայտում և գնահատում, զարգացնել աղետների վաղ ահազանգման համակարգը,
- նվազեցնել ռիսկերի բաղադրիչները և գործոնները՝ նպատակային ծրագրերի իրականացմամբ,
- ձևավորել տարաբնույթ տարերային աղետների կանխատեսման և կանխարգելման ժամանակակից գործուն համակարգեր, ստեղծել ճգնաժամային կառավարման կենտրոն,

- հիմնել քաղաքացիական պաշտպանության հանրապետական կառավարման կետ, կատարելագործել առկա կառավարման կետերը և կապի համակարգերը,
- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության և այլ երկրների համապատասխան կառույցների հետ համագործակցության շրջանակում կադրային քաղաքականության ժամանակակից պահանջներին համապատասխան պատրաստել արհեստավարժ մասնագետներ,
- ապահովել արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում միջազգային համագործակցության զարգացումը,
- ապահովել 911 ծառայության կայացումը՝ այն հաշվով, որպեսզի մարդը օգնության համար դիմի և ստանա միջազգային չափանիշներին համահունչ բազմակողմանի աջակցություն,
- կատարելագործել և զարգացնել պետական փրկարարական համակարգը՝ այն աստիճանաբար համապատասխանեցնելով ընդունված ժամանակակից պահանջներին, զուգահեռաբար պետական փրկարարական կառույցի շուրջ ձևավորելով հասարակական և կամավորական փրկարարական ուժեր,
- կատարելագործել և զարգացնել պետական նյութական պահուստի համակարգը,
- շենքերի, շինությունների նախագծման, բնակավայրերի տարաբնակեցման և զարգացման ծրագրերում հաշվի առնել ինչպես դրանց հնարավոր անվտանգ վայրի ընտրությունը, այնպես էլ սեյսմիկ անվտանգությունը,
- բարձրացնել ծառայության կողմից տեսչական աշխատանքների իրականացման արդյունավետությունը,
- հիմնել աղետների բժշկության համակարգ՝ արտակարգ իրավիճակների և ռազմական դրության (պատերազմի) պայմաններում բնակչությանը համապատասխան օգնություն ցուցաբերելու նպատակով:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Լ.